

Փաշինյանն ամեն գնով փոխելու է եկեղեցու կառուցվածքը: Եթե նրան հաջողվեց Վեհափառին հեռացնել, ոչնչի առջեւ չի կանգնելու: Փաշինյանն իր անձնական շահերը, իր անձնական փրկության հանգամանքը տեսնում է պետությունը կազմաքանդելու գնով: Նա ամեն ինչի պատրաստ է, միայն թե սեփական ժողովրդին խաբելով վերարտադրվի:

Կարդացեք՝ էջ 6

Երեւանը բնապահպանական արտակարգ իրավիճակում է, կարգադրեք, որ անաչառ տեխզննման ենթարկվեն բոլոր ավտոմեքենաները, արգելեք առանց կատալիզատոր մեքենաների շահագործումը, կասեցրեք ավազի եւ քարի հանքերի շահագործումը, դադարեցրեք կանաչի հաշվին շինարարությունը, ձեռք բերեք փողոցները մաքրող-լվացող մեքենաներ:

Կարդացեք՝ էջ 7



Մենք սիրով ենք օգտագործում ձեր բառապաշարի զարդարագույն արտահայտությունները, դրանք դարձրել ենք մեր կյանքի ու առօրյայի անբաժանելի մասը. կոպեկ առ կոպեկ, քյաբաբ առ քյաբաբ, պատերով կտամ, ասֆալտին կփռեմ, էշ, ոջիլ, համբալ, եկեղեցիները չուլաններ են, Գառնու տաճարը հավաբուն է, Շուշին՝ դժգույն քաղաք է...

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 194 (4096), 2 դեկտեմբեր, երեքշաբթի, 2025

www.hraparak.am

ՔՊ-ում նախօրեին ավարտվել է պատգամավորության թեկնածուների առաջադրումների ժամկետը: Այժմ Նիկոլ Փաշինյանը կանգնած է դժվարին ընտրության առաջ՝ ինչպես կազմել նախընտրական ցուցակը: «Կուսակցությունների մասին» օրենքով՝ ցուցակի առաջին 30 հոգուն ընտրում է կուսակցության համաժողովը: Թեեւ չկա արգելք, որ բոլորն էլ ընտրվեն համաժողովի 1000 պատվիրակների կողմից, սակայն Փաշինյանն իր նախասիրությունների ու հաշվարկների պատճառով դժվարին կացության առաջ է կանգնել, ուղիներ է որոնում՝ ինչպես անել, որ եւ չշրջանցի օրենքի պահանջը, եւ ձեւավորի իր համար ցանկալի ցուցակ, որ, օրինակ, Լիլիթ Մակունցը կամ Մարիա Կարապետյանն առաջին հորիզոնականներում լինեն, ինչը թիմում բացառում են, եթե համաժողովն ընտրի: Փոխարենը՝ Ալեն Սիմոնյանը, Տիգրան Ավինյանը եւ էլի մի քանիսը հետին հորիզոնականներում հանգրվանեն, որ այլեւս բարձր պաշտոնի չհավակնեն: Մյուս կողմից՝ ինքը չի կարող միանձնյա ձեւավորել ցուցակը, պետք է դրանից հետո պարզաբանի, թե այսինչին ինչու է այս հորիզոնականում գրել, մյուսին՝ ավելի բարձր կամ ցածր: Անցած հինգշաբթի ՔՊ նախաձեռնող խմբի նիստում հենց այս հարցն է քննարկվել, Փաշինյանը թիմակիցներին առաջարկել է կարծիքներ, առաջարկներ հնչեցնել՝ թեկնածուների ընտրության, ցուցակի ձեւավորման հետ կապված, եւ առայժմ որոշում չի կայացրել, թե որ տարբերակն է աշխատելու:

Արցախի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի պահվածքը վրդովմունք է առաջացրել արցախցիների շրջանում: Հիշեցնենք. նա 10 եպիսկոպոսներից է, որոնք «ընդունեցին Նիկոլ Փաշինյանի կրոնը» եւ Վեհափառի դեմ դուրս եկան: Արցախցի գործիչներն ուղիներ են որոնում՝ Վրթանես եպիսկոպոսին թեմական առաջնորդությունից զրկելու համար: Որոշ արցախցիներ առաջարկում էին Արցախի թեմի առաջնորդարանի մոտ բողոքի ցույց անել, սակայն քաղաքական գործիչներն ու Արցախի թեմական խորհուրդը չեն ողջունել: Կարծում են, որ դրանով կշարունակեն Փաշինյանի սկսած գործը՝ միջամտելով եկեղեցու ներքին գործերին: Թեմական խորհուրդը՝ 5 ատենապետից կազմված, այդ թվում՝ ԱԳ նախկին նախարար Կարեն Միրզոյանը, մշակույթի նախարար Լեռնիկ Հովհաննիսյանը, դիմելու են Վեհափառին, որ հրաժարվում են Վրթանես եպիսկոպոսի հոգեւոր առաջնորդությունից եւ խնդրում են քայլեր ձեռնարկել: Քաղաքական դասն էլ է ուզում Վեհափառի հետ հանդիպել նույն պահանջով: Նրանք 3 օր առաջ հանդիպել էին թեմի առաջնորդին, հորդորել ներողություն խնդրել արցախցիներից, ինչը նա չի արել:

Ո՞վ կսպասեր

Տարիներ առաջ ո՞վ կարող էր պատկերացնել, որ մենք հասնելու ենք այն վիճակին, երբ «Արցախ» բառն արտաբերելը դիտվելու է որպես խիզախության նշան, եւ իշխանությունը պատժելու է այդ բառն արտաբերող պաշտոնյաներին: Որ Արարատի պատկերը սեփական էջում տեղադրելը դիտվելու է հերոսություն: Իսկ Վերնիսաժում վաճառվող Մասիսի նկարների գնորդներին ոչ թե ծաղրելու ենք վատ ճաշակի ու անորակ նկարներ գնելու, ռաբիսության համար, այլ ողջունելու ենք: Ո՞վ կսպասեր, որ Ամենայն հայոց կաթողիկոսի անունը տալու համար որեւէ հայի ոստիկանները կարող են ձերբակալել, ուժ գործադրելով խցկել ոստիկանական մեքենան ու բերման ենթարկել: Եվ ո՞վ կմտածեր, որ սովորական եկեղեցում կիրակնօրյա պատարագին մասնակցելը լինելու է հայրենասիրության, եկեղեցին հարգելու եւ հայ լինելու խորհրդանիշ, իսկ որոշ այլ եկեղեցիներում հակականոնական պատարագներ են ընթանալու, եւ որոշ հոգեւորականներ ըմբոստանալու են եկեղեցական իշխանության դեմ, անգամ կաթողիկոսի հրաժարականն են պահանջելու: Ո՞ր սարսափ երազում կարող էինք նման տեսարանի ականատես լինել, որ եկեղեցում քաղաքական հավաք կազմակերպվի, ինչ-որ մեկին ծափահարեն, եւ հավատացյալները բաժանվեն իշխանական ու ընդդիմադիր հատվածների, ու հենց եկեղեցու ներսում ծեծկռտուք ու քաշքշոց սկսվի: Որեւէ մեկը երբեւէ կարո՞ղ էր պատկերացնել, որ հենց երկրի իշխանությունը դուրս կգա հայ առաքելական եկեղեցու դեմ եւ կվիճարկի 26 տարի առաջ կայացած կաթողիկոսական ընտրությունները: Չէ՞ որ նույն սկզբունքով մենք՝ բոլորս, կարող ենք վիճարկել 2017 թ. խորհրդարանական կամ 2018 թ. մայիսի 8-ին Փաշինյանի ընտրությունը, դա համարելով ոչ լեգիտիմ՝ բազում հիմնավոր պատճառներով: Եվ ի՞նչ է բխելու դրանից՝ կնշանակի հաջորդ բոլոր ընտրություններն ու մեր կյանքն էլ է անօրինակա՞ն:

ԱՄՆ ՀԱԵ Արեւմտյան թեմի առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդյանց եկեղեցում երեկ կայացած պատարագի ժամանակ, ըստ կարգի, հիշատակվել է Վեհափառ հայրապետի անունը: Սա ուշագրավ է նրանով, որ թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանը 10 ուխտադրուժ հոգեւորականներից է, որոնք դուրս են եկել Վեհափառի դեմ: Սա նշանակում է, որ որոշ հոգեւորականներ կամ պատանդ են Նիկոլ Փաշինյանի ձեռքում, իսկ նրա աչքից հեռու ընդունում են Հայոց հովվապետի առաջնորդությունը եւ ըստ կարգի պատարագներ անում, կամ իրենց ենթակայությամբ գործող եկեղեցիներն ու քահանաներն այլեւս ըմբոստներին չեն ենթարկվում:

ՏԵՐԱՐԱՄՆԵՐ ԵՆ ԲՈՒԾՈՒՄ

Մեր տեղեկություններով, Նիկոլ Փաշինյանը հրահանգել է մարզպետներին՝ այն եկեղեցիներում, որոնք շրջիկ պատարագների շրջանակում ինքն «ասպատակել է», շարունակեն պատարագներ կազմակերպել, մասնակցել, լուսանկարներ հրապարակել՝ իբրեւ թե Մայր Աթոռին դավաճանած հոգեւորականներին հանրությունը չի մերժում, եւ անգամ առանց Փաշինյանի էլ մարդաշատ պատարագներ են մատուցվում. մարդիկ այցելում են, հաղորդություն ստանում, եւ նորանոր հոգեւորականներ են միանում Վեհափառի անունը զեղչելու գործընթացին: Սրանով էր պայմանավորված այն, որ կիրակի օրը, երբ Փաշինյանը Սուրբ Սարգիսում էր, Վայոց Ձորի եւ Արագածոտնի մարզպետները լուսանկարներ հրապարակեցին, որ մասնակցել են, մեկը՝ Եղեգնաձորի Սուրբ Աստվածածին եկեղեցու, մյուսը՝ Հովհաննավանքի պատարագներին: Եթե Վայոց Ձորի մարզպետ Վահագն Արսենյանը բավարարվեց մեկ տողով, որ մասնակցել է «սուրբ եւ անմահ պատարագի», ապա ՔՊ-ական Սերգեյ Մովսիսյանն ավելի խոսքաշատ էր գտնվել. «Ինչպես ամեն կիրակի, այս կիրակի եւս Հովհաննավանքում մեր հավատավոր հայրենակիցների մասնակցությամբ մատուցվեց սուրբ եւ անմահ պատարագ: Մեր քրիստոնյա քույրերի ու եղբայրների հետ հաղորդություն ստացանք՝ սուրբ խորհրդով ամրապնդելով մեր կապն Աստծո հետ: Պատարագը մատուցեց Տեր Արամը»: Իսկ Արարատի մարզպետը մասնակցում էր երեւանյան պատարագին: Ինչ վերաբերում է Սուրբ Սարգիսում անցկացված պատարագին, ապա, որոշ տեղեկություններով, Փաշինյանը ՔՊ-ին հրահանգել էր մեկ մարդու պես ներկա լինել, պատճառաբանություն չի ընդունելու, քանի որ կիլոմետրեր չպետք է կտրեն անցնեն, սակայն, միեւնույն է՝ բացակաների թիվը շատ մեծ էր, ինչը զայրացրել է առաջնորդին:

ԷՋՄԻԱԾԻՆ

ՃԱՊԻ ՍԿԱՆԴԱԼԱՅԻՆ ՈՒ ԿՐԻՄԻՆԱԼ ԱՆՑՅԱԼԸ

Մարտի 21-ի գիշերը Արտիմետ խճուղու 1 հասցեում գտնվող գազալցակայանում սպանվեց 36-ամյա Արթուր Պարոնյանը: Նրա սպանության մեջ մեղադրվում է Արմավիրի մարզում հայտնի՝ «Ճապ» մականունով 33-ամյա Կարեն Բադամյանը: Ճապը շատ մտերիմ է Էջմիածնի նախկին ղեկավար Դիանա Գասպարյանի ամուսնու՝ այդ ժամանակ ավագանու ՔՊ-ական անդամ Արամայիս Միրզոյանի հետ, եւ այդ ժամանակ էջմիածինցիները չէին բացառում, որ վեճի եւ սպանության հիմքում նախկին քաղաքապետի ամուսնու հետ կապված «թեմա» էլ կա, մանավանդ՝ գազալցակայանը, որտեղ կատարվել էր սպանությունը, հենց Միրզոյանին է պատկանում:

Աննա ՊԱՊԻԿՅԱՆ

Ներքին գործերի նախարարությունից այն ժամանակ հայտնեցին, որ, նախնական տվյալներով, մարտի 22-ին, ժամը 01:30-ի սահմաններում Արմավիրի մարզի Արտիմետ բնակավայրի սկզբնամասում գտնվող գազալցակայանի տարածքում մի խումբ անձանց միջեւ վիճաբանություն է եղել, արդյունքում տղամարդը կրակոց է արձակել 36-ամյա Արթուր Պարոնյանի ուղղությամբ, որը բժշկական կենտրոնում գիտակցության չգալով՝ մահացել է: Քննչական կոմիտեից էլ հայտնել էին, որ գազալցակայանում տեղի ունեցած սպանության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում 1 անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով եւ 155-րդ հոդվածի 1-ին մասով:

Հանրային քրեական հետապնդումը հարուցվել էր Կարեն Բադամյանի նկատմամբ, որը տեւական ժամանակ հետախուզման մեջ է եղել: Եվ ահա, 10 օր առաջ հայտնի դարձավ, որ այս սպանության գործով նախաքննությունն ավարտվել է, Ճապը՝ Բադամյանը, կալանավորվել է: Նրա պաշտպան Ռոբերտ Խաչատրյանը «Հրապարակ»-ին ասել էր, որ իր պաշտպանյալն ինքնակամ ներկայացել է նախաքննական մարմնին եւ հայտնել, որ մեղադրանքը չի ընդունում: «Հրապարակ»-ին իրավապահ համակարգից հայտնում են, որ Կարեն Բադամյանը տարիներով անցել է մի քանի քրեական գործով, որոնցից մեկը դատարանում շարունակվում է, իսկ մյուսները կարճվել են:

2024 թվականին Արմավիրի մարզի դատարանում քննվել է վարորդական վկայականի համապատասխան կարգ չունենալու, սթափության զննություն չանցնելու վերաբերյալ մի քրեական գործ, որով դատարանը որոշել է Բադամյանի նկատմամբ նշանակել տուգանք՝ 375 հազար դրամի չափով: Մեկ այլ քրեական գործում, որը վաղեմության հիմքով կարճվել է, գրված է. «Կարեն Բադամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասով հետախուզման մեջ գտնվելով, ըստ ստացված ՍԷԿՏ համակարգում գրանցված տեղեկությունների, 2017թ. ապրիլի 26-ին Բագրատաշեն անցակետով մուտք է գործել Հայաստանի Հանրապետության տարածք, սակայն ՀՀ տարածքը լքելու վերաբերյալ տվյալների բացակայության պայմաններում, քննությամբ չպարզված հանգամանքներում եւ ժամանակահատվածում, առանց սահմանված փաստաթղթի կամ պատշաճ թույլտվության, ապօրինի հատել է Հայաստանի Հանրապետության պետական սահմանը եւ 06.08.2020թ.-ին հայտնաբերվել ու ձերբակալվել է Լեհաստանի իրավապահ մարմինների կողմից: Այսինքն՝ Կարեն Արայիկի Բադամյանին մեղսագրվում է հանցավոր արարքի կատարում, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 1-ին մասով (պետական սահմանն ապօրինի հատելը), որը համապատասխանում է գործող քրեական օրենսգրքի 469-րդ հոդվածի 1-ին մասին»:

2012 թվականին էլ Կ. Բադամյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 360-րդ հոդվածի 2-րդ մասով (զինծառայողին վիրավորանք հասցնելը) եւ դատապարտվել է կալանքի 2 ամիս ժամկետով:

Իսկ Արագածոտնի մարզի դատարանում շարունակվում է մեկ այլ քրեական գործի քննությունը, ըստ որի. «Կարեն Բադամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա նախնական համաձայնությամբ, մի խումբ անձանց՝ Ա.Բադամյանի եւ Վ. Ոսկանյանի հետ միասին ապօրինի կերպով ձեռք է բերել հրազեն եւ մարտական փամփուշտներ, որոնք ապօրինի պահել եւ փոխադրել են Վ. Ոսկանյանին պատկանող «BMW X5» մակնիշի 91VV091 համարանիշի ավտոմեքենայով, որոնք հայտնաբերվել եւ առգրավվել են 2023թ. մարտի 15-ին Արագածոտնի մարզի Սասունիկ գյուղի հատվածում հիշյալ ավտոմեքենայի խուզարկությամբ՝ բեռնախցիկից»:

Ստացվում է, որ Արթուր Պարոնյանի սպանության համար մեղքի բաժին ունի նաեւ դատաիրավական համակարգը. փաստացի, ոստիկանությունն ու իրավապահ համակարգը կանխարգելիչ գործողություններ չեն արել, չեն հետեւել բազմիցս իրավապահների տեսադաշտում հայտնված անձի վարքին, եւ վերջինս ամեն անգամ նոր ու ավելի ծանր հանցագործություն է կատարել՝ հասնելով մինչեւ սպանություն գործելուն:

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԲԱՐԴ Է ԼԻՆԵԼՈՒ ԻՆՁ ԴԱՏԵԼԸ

Ֆեյսբուքյան կոշտ գրառման համար հոկտեմբերի կեսերին անհարկի դաժանությամբ՝ նվաստացվելով բերման ենթարկվեց, ապա կալանավորվեց փաստաբան **Ալեքսանդր Կոչուբաեւը**: Կատարվածը մեծ աղմուկ բարձրացրեց, փաստաբանի կինը, որ նոր էր ծննդաբերել, օրեր անց հայտնվեց հիվանդանոցում, եւ միայն դրանից հետո նրա նկատմամբ խափանման միջոցը փոխեցին: Կոչուբաեւի գործով նախաքննությունը տեւել է ընդամենը 1 շաբաթ, գործն ուղարկվել է դատարան, եւ արդեն նույնիսկ կայացել է նախնական դատալսումը: Այժմ փաստաբանն ազատության մեջ է, կալանքը փոխարինվել է չբացակայելու արգելքով, իսկ հաջորդ դատական նիստը նշանակված է դեկտեմբերի 12-ին: Դատարանը քննելու է խափանման միջոցի հարցը:

Ալեքսանդր Կոչուբաեւը դատարանից արագ քննություն է ակնկալում: «Եվս մեկ նիստ, ու կամ կդատեն, կամ կթողնեն»,- ասում է նա մեզ: Կոչուբաեւին այդ մեղադրանքով սպասվում է 2-5 տարի ազատազրկում, եթե դատարանն այդ աբսուրդ մեղադրանքով չարդարացնի նրան: Եվ քանի որ նա իր մեղքը չի ընդունում, պայմանական պատիժ էլ չեն կարող կիրառել:

Հիշեցնենք. Կոչուբաեւին զայրացրել էր հոգեւորականների կալանավորումը, եւ նա Ֆեյսբուքում դատախազներին ու դատավորներին մի գրառում էր նվիրել՝ առանց անուններ հնչեցնելու, անվանել էր վիժվածքներ, հոգին սատանային վաճառածներ, շան տղաներ: Բայց նրան մեղադրում են ոչ թե վիրավորանքի համար, որը Հայաստանում քրեական հանցանք չի համարվում, այլ՝ դատախազների, քննիչների ու դատավորների հասցեին արատավոր տեղեկություններ տարածելու հոդվածով (ՀՀ ՔՕ 490-րդ հոդվածի 2-րդ մաս): Թե այդ որակումներից որն է արատավոր տեղեկություն, դժվար է ասել:

«Այդ հոդվածը հասցեատեր է ուզում՝ կոնկրետ քննիչ, կոնկրետ դատավոր, կոնկրետ դատախազ, բայց իմ գրածը գլոբալ է, կրոնական հայացքի արտահայտություն է»,- ասում է Ալեքսանդր Կոչուբաեւը՝ պատասխանելով հարցին, թե որն է իրեն նման մեղադրանք առաջադրելու հարցում ամենակոպիտ խախտումը: Ըստ փաստաբանի, իշխանության համար բարդ է լինելու իրեն դատելը, քանի որ միջազգային բացասական արձագանքները շատ են:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 30-ին իրավապաշտպանների վիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Մերի Լոուլորը ողջունել էր Կոչուբաեւին՝ արձագանքելով նրա ապօրինի կալանավորմանը եւ քրեական հետապնդմանը: «Խստորեն դատապարտում եմ նրա դեմ առաջադրված քրեական մեղադրանքները եւ կոչ եմ անում Հայաստանի իշխանություններին՝ անմիջապես դադարեցնել դրանք: Պարոն Կոչուբաեւը քրեական հետապնդման է ենթարկվել Հայ առաքելական եկեղեցու հոգեւորականների դեմ անարդար հալածանքները քննադատելու համար, որոնք գլխավորել էին 2024 թվականի խաղաղ բողոքի ցույցերը»,- գրել էր հատուկ զեկուցողը:

Միջազգային պրակտիկայի կոպիտ խախտում էր նաեւ այն, որ ձերբակալությունից հետո խուզարկություն են անցկացրել փաստաբանի տանը եւ առգրավել նրա էլեկտրոնային կրիչները, որոնցում կան փաստաբանական գաղտնիքներ պարունակող եւ վստահորդների շահերին առնչվող տվյալներ:

Կոչուբաեւի վստահորդների թվում է Սրբազան պայքարի գործով մեղադրյալ Արմեն Ալեքսանյանը, որի մեղքն այն է եղել, որ նա, նմանակելով վարչապետ Փաշինյանին, տանը եղած-չեղածով՝ հին երշիկով ձվածեղ է սարքել ու տեսանյութը տեղադրել Տիկ Տոկում: Նյութի վերջում էլ, դիմելով վարչապետին, ասել է. «Սրա իմաստն այն է, որ պետք է անշնորհքի նման ձվածեղը դնել դեմդ՝ Սուրբ Զատիկի օրով, ու ձվածեղ ուտել, պարոն Փաշինյան»:

«Ձվածեղ է սարքել լայվով, որով վերարտադրել է վարչապետի՝ ձվածեղ պատրաստելու տեսանյութը, եւ սրա հիման վրա նրան մեղադրել են ահաբեկչության նախապատրաստություն կատարելու մեջ»,- ասում է Ալեքսանդր Կոչուբաեւը: Փաստաբանը մեզ հայտնեց, որ Արմեն Ալեքսանյանի կալանքը եւս փոխարինվել է տնային կալանքով: «Դատարանն արձանագրել է, որ ռիսկերը նվազել են, եւ առկա է այլընտրանքային խափանման միջոց կիրառելու հնարավորություն: Բայց այս որոշումն ինքնին հիմնավորում է, որ այս ողջ ընթացքում էլ կալանքը եղել է ապօրինի, որովհետեւ հենց առաջին օրվա՝ կալանքը տալու եւ այսօրվա իրավիճակի մեջ ոչ մի տարբերություն չկա: Այն, ինչի համար իմ պաշտպանյալին կալանավորել են, այդ ենթադրական ռիսկերը նաեւ առկա են այսօր, ինչը նշանակում է, որ զուտ խնդիր կար այդ մարդուն ազատազրկել»:

Հիշեցնենք նաեւ, որ երբ Կոչուբաեւը կալանավորված էր, Արմեն Ալեքսանյանը հավատարիմ էր մնացել իր պաշտպանին, դատարանում պնդել էր, որ իր փաստաբանից չի հրաժարվում, այլ փաստաբան էլ չի կամենում:

Սյուզան ՍԻՄՈՆՅԱՆ
syuzan.simonyan@hraparak.am

ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱԶԳԻ ՏԻՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2 ՊԱՅՄԱՆ Է ՊԵՏՔ՝ ՓՈՔՐԱԹԻՎ ԴԱՎԱՃԱՆՆԵՐ ԵՎ ՄԵԾ ԹՎՈՎ ՀԻՄԱՐՆԵՐ

- Պարոն Ղազինյան, Սահմանադրությամբ՝ քաղաքական իշխանությունը սահմանափակված է՝ միջամտելու Հայ առաքելական եկեղեցու գործերին: Այն, ինչին այսօր ականատես ենք լինում, միջամտությո՞ւն է, եւ ի՞նչ է դա իրավական տեսանկյունից ենթադրում:

- Մասնագետ պետք չէ լինել՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվում: Հիմա իմաստ չունի մտնել մի ոլորտ ու քննարկել՝ իրավունք ունե՞ն միջամտելու, չունե՞ն, որովհետեւ դու մտնում ես մի ոլորտ, որը ձեռնտու է այս «նախաձեռնությամբ» հանդես եկող կողմին: Քիչ թե շատ գրագետ, հայրենասեր մարդու համար ակնհայտ է, որ սկսված այս գործընթացը որեւէ կապ չունի Վեհափառի, մյուսի, երրորդի հետ, նրանք՝ բոլորը, միջոցներ են, այս ամենն ուղղված է մեր Եկեղեցու, հավատքի դեմ, որի՝ հեռուն գնացող նպատակներն ամբողջովին տեղավորվում են այս իշխանության վարքագծի մեջ՝ մեր ինքնությունը ոչնչացնելուն միտված: Սա է ողջ ճշմարտությունը, որի մասին տասնյակ, հարյուրավոր վերլուծաբաններ գրագետ, խելոք վերլուծություններ են արդեն ներկայացրել, եւ կարծում եմ՝ նոր բան չեմ ասելու: Եկեղեցին է մնացել միայն կանգուն, որը կարող է մեր ժողովրդին համախմբելու քայլեր անել, ուզում են դա վերացնել կամ հնարավորինս թուլացնել, որպեսզի ճանապարհը բացվի այն նպատակներին հասնելու համար, ինչի համար որ այս մարդիկ իշխանության են բերվել: Մենք՝ բոլորս, սա շատ լավ գիտենք՝ խնդիրն ինչ-որ հոգեւորականների հարցը չէ, պետք չէ ամեն թերուսի փորձել միանգամից արձագանքել:

- Եթե, առավել եւս, խնդիր է դրված մեր ինքնությունը պահող հենասյունը կոտրել, չե՞ք կարծում, որ մենք՝ շարքային քաղաքացիներս էլ անելիք ունենք, մենք պասիվ դիտորդի կարգավիճակում ենք հայտնվել, մինչդեռ գուցե Դուք ասեք, թե ինչ կարող ենք անել մենք՝ բոլորս:

- Ես համաձայն եմ, որ ինչ-որ բան պետք է արվի, ես չգիտեմ՝ կամ ուշացել ենք, կամ ուշանում ենք, թեպետ երբեք որեւէ լավ բան անելու համար ուշ չէ, մանավանդ՝ եթե Եկեղեցու մասին ենք խոսում, ամենալուրջ մեղքերից մեկը հուսահատությունն է: Այո, պետք է քայլեր արվեն, ընդամենը պետք են կազմակերպիչներ: Ստացվում է, որ այսօր մենք ընկած ենք օրակարգ թելադրողների մտածած, նպատակային «հիմարությունները», մտքերը վիճարկելով, այսինքն՝ իրենց օրակարգը սպասարկելով, ինչն իսկապես ցավալի է:

- Որ ասում եք՝ կազմակերպիչներ են պետք, ո՞ւմ նկատի ունեք՝ ընդդիմությա՞մնը, ովքե՞ր պետք է կազմակերպեն:

- Այդ թվում: Ովքեր ունեն հնարավորություններ, ռեսուրսներ, ցանկություններ: Հասարակության յուրաքանչյուր անդամ այնտեղ, որտեղ կարող է հաջողել, դրանով պետք է զբաղվի: Չես կարող կիսագրագետ մեկին ասել՝ վերլուծի եւ լուծումներ առաջարկի: Բայց, վերջին հաշվով, նախ պետք է կոտրել այս անտարբերությունը, որի հիմքում, ցավալիորեն, հերթական հիասթափությունն էր, հուսախաբությունը: Ամեն անգամ, երբ լույսի պես պայքարի մի շող է նկատվում, չի հասնում հաջողության, հուսահատվողների թիվն ավելանում է: Իսկ դա ձեռնտու է միայն այս վիճակը ստեղծողներին:

- Եկեղեցու շուրջ մի այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ պայքարը տեղափոխվել է ներեկեղեցական դաշտ, հոգեւոր դասի միջոցով է իշխանությունը փորձում պայքարել Վեհափառի, կառույցի դեմ: Այս իրավիճակում ո՞վ անելիք ունի՝ քաղաքական ուժե՞րը, գուցե հոգեւորականնե՞րը, ինչպե՞ս անել, որ կասեցվի այս ընթացքը:

- Իմ կարծիքով, դժվար չէ տարբերակել Եկեղեցու դեմ պայքարող հոգեւորականներին, մենք՝ շարքային քաղաքացիներս, ընդամենը պետք է համախմբվենք Եկեղեցու շուրջ եւ թույլ չտանք տարբեր տեսակի մտքի թռիչքներ: Որեւէ բան մեր երկրում իշխանությունների կողմից պատահական չի ասվում եւ չի արվում, եթե մտածում եք՝ ինչ-որ բան ասվել է, հետո մոռացել են, նման բան գոյություն չունի, իզուր չեն ասում՝ լավագույն երկու բժիշկ կա՝ ժամանակն ու տարածությունը: Ահա՝ այդ ժամանակի բժիշկն ինչ-որ իմաստով նաեւ հակառակն է աշխատում, գաղափար է նետվում դաշտ, որոշ ժամանակ անց մոռանում են, հետո ինչ-որ պահից դա դառնում է իրականություն: Հիմա, այս պահին ոչ ամբողջովին, բայց ինչ-որ չափով հասնում են Եկեղեցին պառակտելու նպատակին, մենք տեսնում ենք պառակտված հոգեւորականություն, ասում են՝ գյուղ չկա, որ շուն չլինի, բայց, ցավոք, շատ են նրանք: Չերչիլի հայտնի խոսքերն են. «Յուրաքանչյուր ազգի տիրելու համար երկու պայման է պետք՝ փոքրաթիվ դավաճաններ եւ մեծ թվով հիմարներ»: Մեզ մոտ դավաճանների թիվը կարծես քանի գնում՝ ավելանում է: Մեր պատմությունից էլ դասեր չենք քաղել, որ միշտ պարտվել ենք պառակտությունների պատճառով, արտաքին թշնամին մեր միասնականության դեպքում որեւէ անգամ հաջողության չի հասել, երբ էլ հաղթանակել ենք, հաջորդել են դավաճանություն, պառակտում, ինչը, ցավոք, հատուկ է մեր ազգի որոշ մասին, եւ սրանով բերել պարտության: Զարմանալի է՝ այսպես ո՞նց ենք գոյատեւել դարեր, հարյուրամյակներ շարունակ:

Նման իրավիճակ է նաեւ այսօր, որի պատճառներից, ինչպես նշեցի, այդ ապատիան է, հուսահատությունը: Այո, համաձայն եմ, որ շատերը չգիտեն այսօր ինչ անել, շատերն էլ պայքարի փորձեր արել են՝ չեն հաջողել, հուսահատվել են ու ոչ մեկին չեն վստահում, ինչն ամենավատն է: Սա վերաբերում է նաեւ որոշ քաղաքական ուժերի, որոնք իրենց վարքագծով վստահություն չեն ներշնչում իրենց նկատմամբ: Ես՝ ինքս էլ կդժվարանամ ասել՝ ինչ է պետք է անել, բայց պետք է հաստատ ինչ-որ բան անել:

*Հարցազրույց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի նախկին դեկան, ՀՀ արդարադատության խորհրդի նախկին անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Գագիկ Ղազինյանի** հետ*



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԱՅՍ ԱՄԵՆԸ ՊԵՏՔ Է ԽԻՍՏ ԿԱՄԱՅԻՆ ԿԵՐՊՈՎ ՃՆՇԵԼ

Շրջիկ պատարագասերների խումբը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը, Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը եւ այլ ՔՊ-ականներ, անցած կիրակի Երեւանի Սուրբ Սարգիս եկեղեցում էին մասնակցում հերթական պատարագին: Մասնակցում էին նաեւ այս եկեղեցում պատարագներին մշտապես ներկա գտնվող քաղաքացիներ, այդ թվում՝ 5 ամիս առաջ կալանավորված Սամվել Կարապետյանի եղբորորդին՝ Նարեկ Կարապետյանը, որը «Մեր ձեւով» շարժման համակարգող խորհրդի նախագահն է:

Երբ օրվա պատարագիչը Վեհափառի անունը հերթական անգամ զեղչեց պատարագի տեքստից, եկեղեցում գտնվող քաղաքացիները սկսեցին իրենք վանկարկել կաթողիկոսի անունը: Պարզվեց՝ այս եկեղեցում արգելված է Գարեգին Բ-ի անունը տալը, եւ ներկա ոստիկաններն արագ հարձակվեցին բղավողներից մի քանիսի՝ «Հայաքվեի» խորհրդի անդամ Հովհաննես Իշխանյանի, հանրային գործիչ Հայկ Դորունցի վրա եւ ուժով դուրս բերեցին եկեղեցուց, քաշքշելով նստեցրին ոստիկանական մեքենան եւ տարան անհայտ ուղղությամբ: Ավելի ուշ իմացանք, որ նրանց տարել են Մոնումենտի կողմերը եւ իջեցրել մեքենայից: Սուրբ Սարգիս եկեղեցում էր նաեւ Արարատյան թեմի առաջնորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը, որն այն 10 հոգեւորականների թվում է, որոնք պահանջում են կաթողիկոսի հրաժարականը եւ միացել են Փաշինյանին՝ նրան գահընկեց անելու գործում: Նրանք 2 օր առաջ մի հայտարարություն են ստորագրել, որով Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ին կոչ են անում՝ կամովին հանգստի գնալ: «Մենք ակնկալում ենք, որ Գարեգին Բ Կաթողիկոսը, ի սեր մեր եկեղեցու եւ մեր ժողովրդի, սթափ կգնահատի ստեղծված իրավիճակը, չի տանի մեր ազգն ու մեր Եկեղեցին ավելորդ ցնցումների, կամովին հանգստյան կկոչվի, եւ այդկերպ հնարավոր կլինի նոր ընտրություններ կազմակերպելու»,- նշված է հայտարարությունում, որն առաջինը հրապարակել է վարչապետի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ»-ը:

Ինչո՞ւ այս հոգեւորականներն ընտրեցին Փաշինյանի առաջ ծնկելու ճանապարհը եւ ինչո՞ւ դուրս եկան իրենց օծած ու պաշտոնների նշանակած Վեհափառի դեմ: Արդյո՞ք այս ընթացքը կարող է վտանգավոր լինել Հայ առաքելական եկեղեցու համար: Փաշինյանին կհաջողվի՞ եկեղեցին քայքայել ներսից՝ կճոյանների եւ կոնյակ-բոնբոներկաներով համալսարան ընդունող նախկին դեկան-հոգեւորականների միջոցով: Այս մասին «Հրապարակը» զրուցել է հասարակական-քաղաքական գործիչ **Միքայել Նահապետյանի** հետ:

«Ինձ համար, անկեղծ ասած, տարօրինակ ոչինչ չկա: Ես սպասում էի այդ մարդկանցից, որ վարվելու են հենց այդպես: Հետեւանքների մասով, եթե կաթողիկոսը մի կողմից կտրուկ, մյուս կողմից հեռատես քայլերով լուծումների հիմքեր չնախապատրաստի, ապա կարծում եմ՝ Փաշինյանն այս պայքարում հաղթած դուրս կգա: Ես ամենալավ խորհրդատուն չեմ լինի եկեղեցու կառավարման հարցում եւ ոչ էլ ունեմ նման կենսափորձ, սակայն եթե խնդիրներին նայենք որպես ինստիտուտի, իսկ պրոցեսին՝ զուտ որպես քաղաքական պրոցեսի, մի կողմից, խիստ անհրաժեշտություն է՝ կտրուկ միջոցներով ճնշել այս անհնազանդության դրսեւորումները, ինչը որեւէ կերպ եկեղեցու բարօրության համար չէ: Այստեղ չկա գաղափարական, փիլիսոփայական անհամաձայնության, այլակարծության հարց, այստեղ խոսքը պարզ խարդավանքի, դավադրության մասին է: Մի կողմից, այս ամենը պետք է խիստ կամային կերպով ճնշել, մյուս կողմից էլ՝ մեզ հայտնի պատճառներով, եկեղեցին, անխոս, խնդիրներից զուրկ չէ, եւ չար նպատակներ ունեցող մարդիկ իրենց փաստարկներում հաճախ հենվում են իրականում գոյություն ունեցող արատների եւ խնդիրների վրա, սակայն կաթողիկոսը պետք է գտնի հարցի լուծման տարբերակը եւ բարոյական արժեքներ կրող մարդկանց առաջնորդությունն էլ ավելի ուժեղացնի: Հավատացյալներին եւ եկեղեցին պաշտպանող մարդկանց պետք է հույս ներշնչել, որ, այնուամենայնիվ, նկատելի խնդիրների մասով փոփոխություններ լինում են»:

Բենթլիասեր եւ կոռուպցիոն սկանդալներով հայտնի Կճոյանը, ի վերջո, ինչո՞ւ գնաց Փաշինյանի հետ գործարքի: «Ամեն մարդ կատարում է այն դերը, որի համար ապրել է, որի համար իրեն նախապատրաստել են, զուտ տեղի է ունենում դա»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՎԱՀԱԳՆ ՉԱԽԱԼՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԿԱՅՈՂ ՈՉ ՄԻ ԱՊԱՑՈՒՅՑ ԳՈՐԾՈՒՄ ՉԿԱ

ԿԱԼԱՆՔ

Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը՝ նախագահությամբ դատավոր Կարեն Ֆարխոյանի, որոշեց եւս երեք ամսով երկարացնել Վահագն Չախալյանի նկատմամբ նշանակված խափանման միջոց կալանքի ժամկետը: Դատարանն ինչպես իր նախկին, այնպես էլ ներկայիս որոշմամբ գտավ, որ դատավարության տվյալ փուլում արձանագրված փաստական տվյալներն ու տեղեկությունները «ողջամտորեն բավարար են՝ հիմնավորված համարելու Վահագն Ռուբենի Չախալյանի առնչությունն իրեն մեղսագրվող ենթադրյալ ահաբեկչություն հանցագործությանը»: Այս մասին «Հրապարակի» հետ զրույցում ասաց Չախալյանի շահերի պաշտպան, փաստաբան **Վրեժ Խաչիկյանը**: Նա նաեւ նկատեց. «Բնականաբար, դատավարության սույն նախնական փուլում դատարանը դիտարկել է մեղադրական եզրակացության մեջ տեղ գտած տեղեկությունները եւ փաստական տվյալները, մինչեւ որ հետագայում դատաքննության փուլում կուսումնասիրվեն բոլոր ապացույցները»:

- Ի՞նչ տեղեկությունների եւ փաստական տվյալների մասին է խոսքը:

- Երբ հանրային մեղադրողներն ասացին, որ Վահագն Չախալյանի կալանքը երկարացնում են, որովհետեւ նա կարող է խոչընդոտել վարույթի ընթացքին, ես հստակ խնդրեցի դատարանին, որ վերջինս հարց ուղղի, թե կոնկրետ որ պարագայում կարող է Չախալյանը խոչընդոտել գործին: Կարո՞ղ է ազդել վկաների վրա կամ այլ ձեւով ազդել գործի ընթացքի վրա: Իմ հարցը մնաց անպատասխան, ոչինչ չպատասխանեցին, ոչինչ չհիմնավորեցին: Դատարանը որոշ ժամանակ առաջ հայտարարել էր, որ վերջինս կարող է ազդել վկաների վրա, սակայն բոլոր վկաներն այժմ դրսում են, բացառությամբ՝ երեք անձի: Վկաների հետ խոսելիս Վահագն Չախալյանի մասին որեւիցե հարցադրում չի արվել, առերեսում չի կազմակերպվել, ինչ վկաների վրա ազդելու մասին կարող է խոսք լինել: Եթե վկաները ցուցմունք չեն տվել, չեն առերեսվել, ինչպե՞ս կարող է նման բան լինել: Պատգամավոր Արթուր Սարգսյանն էլ իր խոսքում նշել է, որ Չախալյանի հետ երբեք առնչություն չեն ունեցել, նա եւս փաստել է, որ Չախալյանը լրիվ անմեղ է, որ կողմերի միջեւ անգամ շփում չի եղել: Հետաքննության մարմինը խոսում է ձայնագրությունների մասին, սակայն հայտնի է, որ Բագրատ սրբազանի հետ կապված ձայնագրությունները մոնտաժված են: Ես այժմ կարող եմ եւս մեկ անգամ վկայակոչել այն բառերը, որոնք վերագրվում են Վահագն Չախալյանին: 600 էջի մեջ նրան միայն հետեւյալն է վերագրվում: Ընդ որում՝ զավեշտն այն է, որ անգամ անուն չի նշվում, միայն Չախալյան ազգանունն է հնչում: Ձայնագրառումը կատարած քննիչն ասում է՝ զանգել են, խոսել են Վահագն Չախալյանի հետ: Ասում եմ՝ որտեղի՞ց գտաք Վահագն անունը, եթե ձայնագրության մեջ չկա, գործի նյութերում չկա: Ձայնագրության մեջ Բագրատ սրբազանը հարց է տալիս, ասում է՝ «Ժորա անցանք, Չախալյան», վարույթն իրականացնող մարմինը ենթադրում է, որ նրանք ցանկացել են ահաբեկչություն կատարել, Չախալյանն էլ Վահագն Չախալյանն է: Այս աշխարհի երեսին, փաստորեն, ուրիշ Չախալյան ազգանունով մարդ գոյություն չունի: Ընդհանուր պատկերը սա է: Ֆանտաստիկա է, այս գործը պայծառատեսության ժանրից է: Նախաքննության մարմինն առաջնորդվում է ենթադրություններով, լսում է «Չախալյան», ենթադրում է, որ խոսքը Վահագն Չախալյանի մասին է: Մի քանի տասնյակ քննիչներից ոչ մեկին չի հետաքրքրում, թե խոսքն ինչ Չախալյանի մասին է: Այս է պատճառը, որ հանրային մեղադրողը չի կարողանում հստակ պատասխան տալ մեր հարցերին: Այս փուլում դատարանի համար է հիմք հանդիսացել մեղադրական եզրակացության մեջ տեղ գտած տեղեկատվությունը: Ինչպե՞ս կարող է մի քանի բառը հիմնավոր կասկածի շեմը հաղթահարել: Փաստացի վերը նշված հանգամանքները, տեղեկությունները՝ մի քանի բառերը՝ Չախալյան ազգանունով, եւ վարույթն իրականացնող մարմնի ենթադրությունները հիմք են ծառայում, որպեսզի Վահագն Չախալյանը 5 ամիս հետո եւս 3 ամիս գտնվի կալանքի տակ:

Լիդիա Մանթաշյանի նկատմամբ կիրառված կալանք խափանման միջոցը վերջապես վերացվեց, ի ուրախություն մեզ՝ բոլորիս, քանի որ հանրային ճնշումն իր նպատակին հասավ, քանի որ դատարանը ցանկացած որոշում որ կայացնում է Հայաստանի Հանրապետության անունից, պետք է կայացնի ի շահ ՀՀ շահառուների՝ հայ հանրության եւ ոչ թե ի շահ գործող իշխանությունների: Դատարանը պարտավոր է եւ պետք է արդարադատություն իրականացնի: Կարծում եմ, եթե հայ հանրությունն այնկերպ, ինչպես անմեղ մեղադրյալ Լիդիա Մանթաշյանի դեպքում իր դժգոհությունն արտահայտեց, նույնկերպ այն արտահայտի սույն քրեական գործով կալանքի տակ գտնվող մյուս արդարների, այդ թվում՝ 2011 թվականից Հայաստանի գրողների միության անդամ, 2001 թվականից ՀՀ սպորտի վարպետ, բազմազավակ հայր, «Կամք» հասարակական միավորման հիմնադիր, Արցախյան պատերազմի մասնակից, մարտական ծառայության մեդալով պարգեւատրված եւ հայ հանրության իրավունքների եւ ազատությունների համար պայքարող Վահագն Չախալյանի համար, ապա կալանքի տակ գտնվող բոլոր արդարների խափանման միջոցները կփոխվեն:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՈՒԹ ՄՐՑՈՒՅԹԻՑ ՀԵՏՈ ԿԳՄՍՆ-ՈՒՄ ՆՈՐ ՀԱՍԿԱՑԵԼ ԵՆ, ՈՐ ՊԵՏՔ Է ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՄԵԾԱՑՆԵԼ



Տավուշ բերդը առաջին անգամ աղբյուրներում հիշատակվում է 10-րդ դարի սկզբին՝ որպես Աշոտ Երկաթի փոխարքաների նստավայր (հիմնականում՝ Ցլիկ Ամրամի): 10-11-րդ դարերում ամրոցն անցել է լոռեցի Կյուրիկյաններին: Ամրոցը եղել է այն յուրահատուկ շինություններից, որն ունեցել է իր ներդաշնակ ջրամատակարարումը: Քանի որ 14-րդ դարից բերդը եղել է լքված, այն գտնվում է վատ վիճակում:

2023 թվականին, հնագետ Տիգրան Ալեքսանյանի ղեկավարությամբ, այնտեղ հնագիտական պեղումներ են կատարվել, հայտնաբերվել են արժեքավոր գտածոներ, որոնց մի մասը զետեղվել է Բերդ քաղաքի երկրագիտական թանգարանում: Մի քանի ամիս առաջ ԿԳՄՍ նախարարության Հուշարձանների պահպանության ծառայության վարչության պետ Հարություն Վանյանից տեղեկացել եմ, որ կատարված հնագիտական պեղումները հնարավորություն են տվել կազմելու Տավուշ ամրոցի եւ ամրոցի լանջին գտնվող փոքր Սուրբ Աստվածածին եկեղեցու ամրակայման եւ վերականգնման աշխատանքների նախագիծ:

Նախագծով աշխատանքների արժեքը սահմանվել է 186 միլիոն դրամ: Հ. Վանյանը մեզ հայտնեց, որ 2024 թվականին՝ 4 անգամ, 2025 թվականին՝ 2 անգամ այդ աշխատանքների համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան մրցույթ է հայտարարվել, այդ հայտարարությունը տեղադրվել է համապատասխան ինտերնետային կայքում: Սակայն մրցույթները չեն կայացրել, քանի որ դրանց մասնակիցներ չեն եղել:

Նոյեմբերի 20-ին արդեն ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին եմ տեղեկատվական հարցում արել. «ԿԳՄՍ նախարարությունը մտադի՞ր է առաջիկայում շինարարական ընկերությունների հետ համագործակցելով՝ այդ աշխատանքների համար նոր մրցույթ հայտարարել: Տավուշ բերդի եւ եկեղեցու վերականգնման համար ո՞ր թվականներին, քանի՞ անգամ է մրցույթ հայտարարվել, դրանց վերականգնման համար ԿԳՄՍՆ-ի նախատեսած 186 միլիոն դրամն անբավարար չէ՞ այդ դժվարին, բարձրադիր տեղանքում մասնագիտական բնույթի մեծածավալ աշխատանքների իրականացման համար, այդ պատճառո՞վ չեն կայանում մրցույթները»:

ԿԳՄՍ նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Վահրամ Գասպարյանի ստորագրությամբ պատասխան եմ ստացել, որտեղ նշված է. «ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Տավուշ ամրոցի պարսպապատերի, կից կառույցների, եկեղեցու ամրակայման, վերականգնման եւ տարածքի մասնակի բարեկարգման շինարարական աշխատանքների համար 4 անգամ մրցույթ է հայտարարվել 2024 թվականին եւ եւս 4-ը՝ 2025 թվականին: Նշյալ մրցույթներին ներկայացված գումարը սահմանվել է՝ համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մրցույթներում հայտեր չեն ներկայացվել, ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը նախատեսում է վերանայել նախահաշիվը»:

Այսինքն, Տավուշ ամրոցի պարսպապատերի, կից կառույցների, եկեղեցու ամրակայման, վերականգնման եւ տարածքի մասնակի բարեկարգման աշխատանքների համար անցյալ տարի եւ այս տարի, փաստորեն, 8 անգամ մրցույթ են անցկացրել, ենթադրվում է, որ դրանից առաջ աշխատանքների նախագիծ եւ նախահաշիվ է կազմվել: Ինչպե՞ս է եղել, որ նախագիծ եւ նախահաշիվ կազմողները չեն հասկացել, որ վերականգնողական, շինարարական աշխատանքները կատարվելու են բարձրադիր, դժվարամատչելի տեղանքում, որտեղ էլեկտրական հոսանքի գիծ չկա, ջուր, ցեմենտ, ավազ, շինարարական այլ նյութերն ամրոց հասցնելու համար պետք է բարձունք տանող քիչ թե շատ բարեկարգ ճանապարհ կառուցել, եւ այդ ամենը բարձրացնում է կատարվող աշխատանքների գինը:

Առհասարակ՝ ամրոցի, եկեղեցու վերականգնումը ոչ թե սովորական օբյեկտների շինարարություն է, այլ՝ մասնագիտական աշխատանք, այդ հարցում պետք էր խորհրդակցել պատմական, մշակույթի հուշարձանների վերականգնողական աշխատանքներով զբաղվող կազմակերպությունների հետ: Երկու տարի առաջ այդտեղ պեղումներ են կատարվել, պեղումներից հետո պետք է նաեւ ամրակայման աշխատանքներ արվեին, որպեսզի ամրոցի կառույցների, հողի շերտի փլուզումներ չլինեն, ինչը կրկնակի դժվարացրել է պատմամշակութային արժեքավոր հուշարձանի վերականգնումը:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ԻՆՉՊԵ՞Ս ՎԵՐՑՆԵԼ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԳՐՈՀՈ՞Վ, ԹԵ՞ ՀԱՄՈԶԵԼՈՎ

Հայաստանում ընդդիմադիր կուսակցությունների եւ ուժերի պակաս չկա, դրանք՝ բոլորն էլ ձգտում են իշխանության, նրանց նպատակն է՝ իշխանությունից հեռացնել Նիկոլ Փաշինյանին ու նրա գործակիցներին եւ նրանց փոխարեն իշխանության լծակները վերցնել իրենց ձեռքը: Հարցն այն է, թե ինչպես անել դա: Իշխանափոխության իրականացման դասական մեխանիզմը հետեւյալն է. ցույց տալ հասարակությանը, որ իշխանությունն անկարող է լուծել երկրի առջեւ կանգնած խնդիրները, բոլոր հարցերում ձախողվել է, անկեղծ ասած՝ հասարակությունն այդ ամենը շատ լավ տեսնում է, բացատրելու կամ ցույց տալու առանձնապես մեծ բան չկա էլ, նույն հասարակությանը համոզել, որ հենց դու կարող ես արդյունավետորեն լուծել այդ խնդիրները՝փոխարինել տապալված իշխանությանը եւ հանրային աջակցության շնորհիվ հեռացնել իշխանությունից: Տեսության մեջ ամեն ինչ շատ հեշտ է, այց երբ հարցը գալիս հասնում է տեսությունը կյանքի կոչելուն, առաջանում են խնդիրներ, տեսությունն իրականություն չի դառնում:

2020 թվականի 44-օրյա պատերազմից, պարտությունից եւ թշնամու պայմանները հնազանդորեն կատարելուց հետո իշխանության հանրային աջակցությունն էականորեն սկսեց ընկնել, ընդդիմությունը որոշեց, որ դա հնարավորություն է իշխանափոխության համար, եւ երկիրը տապալված իշխանությունից ազատելու մի քանի փորձ արեց՝ փողոցային պայքարով. Հայրենիքի փրկության, Դիմադրության, Սրբազան պայքարի շարժումները: 2021 թվականին նույնը փորձեցին անել խորհրդարանական ընտրությունների միջոցով, սակայն բոլոր փորձերն անհաջողության մատնվեցին, իշխանությունը հաղթեց: Թվում է՝ ամեն ինչ շատ պարզ է. իշխանությունը չունի հանրային աջակցություն, մարդիկ իրենց բնակարաններում, միջանձնային զրույցներում, փողոցում, հրապարակներում քննադատում, հայհոյում, անիծում են իշխանություններին, բայց երբ գալիս է իշխանությանը հեռացնելու վճռական պահը, ինչ-որ բան ընթանում է ոչ ըստ ծրագրվածի, թվացյալ երաշխավորված հաջողությունը վերածվում է հերթական տապալման: Լավ, ի՞նչ անել, որտե՞ղ գտնել անհաջողության բացատրությունը:

Քանի որ հերթական խորհրդարանական ընտրություններին շատ քիչ ժամանակ է մնացել՝ ընդամենը վեց ամիս, ընդդիմադիր տարբեր կուսակցություններ մտածում են նույն խնդրի շուրջ՝ ինչպես անել, որ այս անգամ էլ անհաջողության չմատնվեն, ինչպես հերթական անգամ՝ չկանգնել նույն փոցխի վրա, որ փոցխի պոչը նորից չհարվածի իրենց իսկ գլխին: Թվում է, թե ինչ-որ ուժեր գտել են անհաջողության բանաձեւը եւ, ըստ այդմ, խնդրի լուծման իրենց տարբերակը՝ իշխանությունը վերցնել ոչ թե հրապարակային պայքարի, կոշտ դիմակայության, այլ համոզելու միջոցով: Ըստ նրանց, իշխանությանն ամեն անգամ հաջողվում է հաղթել հասարակությանը եւ ընդդիմությանը, որովհետեւ նա ունի, այսպես կոչված, միջազգային հանրության աջակցությունը, տարբեր արեւմտյան պետություններ եւ դրանց ղեկավարներ, միջազգային կառույցներ անթաքույց աջակցում են իշխանություններին՝ անկախ նրանից, թե ինչ վարքագիծ են նրանք դրսեւորում՝դաժանորեն ճնշում են հանրային բողոքի ակցիաները, թե մարդկանց խոսելու եւ իրենց կարծիքն արտահայտելու համար բանտերն են գցում: Երկրում անօրինականության, վախի եւ բռնության մթնոլորտ հաստատելու իշխանության բոլոր քայլերը, միանշանակ, աջակցություն են ստանում արեւմտյան երկրների կողմից, եւ այդ աջակցությունը միայն խոսքի միջոցով չէ, այլեւ՝ ֆինանսական եւ տեխնիկական: Արեւմտյան երկրները եւ կառույցները առատաձեռնորեն ֆինանսներ եւ տեխնիկական աջակցություն են տրամադրում այդ բռնությունն իրականացնող կառույցներին՝ պարեկային ոստիկանություն, քննչական եւ հակակոռուպցիոն կոմիտեներ եւ մարմիններ, տասնյակ միլիոնավոր դոլարներ, ժամանակակից մեքենաներ, զենք եւ զինամթերք: Սրանով նրանք բացահայտ ցույց են տալիս, որ սատարում են գործող վարչախմբին: Եթե այդ աջակցությունը չլինի, իշխանությունը զրկված կլինի հասարակությանը, հանրային դժգոհությունն ուժով եւ բռնությամբ լռեցնելու հնարավորությունից, մտածում են նոր իր հայտ եկած ընդդիմադիրները:

Իսկ ինչ անել նման պարագայում, երբ ուժերի հարաբերակցությունն իսկապես անհավասար է. մի կողմում հայ հասարակությունն է, անզեն ու անպաշտպան, մյուս կողմում՝ իշխանությունը՝ իր բռնության հսկայական մեքենայով, արեւմտյան իր աջակիցների ֆինանսական, տեխնիկական եւ քարոզչական աջակցությամբ: Թվում է՝ ելքը մեկն է. համոզել այդ նույն արեւմտյան աջակիցներին, որ նրանք սխալ են կողմնորոշվել, սխալ ընտրություն են կատարել՝ պաշտպանելով Նիկոլ Փաշինյանին, որ աջակցելով Հայաստանի հասարակության աջակցությունը կորցրած Նիկոլ Փաշինյանին, դրանով կորցնում են հայ հասարակության աջակցությունը, կորցնում են իրենց հեղինակությունը հայ հասարակության աչքում, այսպես կոչված, արեւմտյան արժեքները՝ մարդու իրավունքներ, խոսքի ազատություն, ժողովրդավարություն, միանգամից արժեզրկվում են, մարդիկ հասկանում են, որ այդ արժեքները ոչ մի կերպ համատեղելի չեն արեւմտյան երկրների հետ: Դրա համար ինչ պետք է անել՝ Հայաստանում աջակցել նոր ուժերի, նոր գործընկերներ գտնել, ովքեր նույնպես պատրաստ են ծառայել արեւմտյան երկրներին, բայց ունեն հանրային աջակցություն, հեղինակազրկված չեն եւ, հետեւաբար, չեն հեղինակազրկի այդ երկրներին եւ կառույցները:

Տեսության մեջ դարձյալ ամեն ինչ շատ տրամաբանական է հնչում. իսկապես արեւմտյան երկրները եւ կառույցները պետք է շահագրգռված լինեն այստեղ իրենց գործընկեր քաղաքական ուժին փոխելու հարցում, քանի որ Փաշինյանի իշխանությունը վարկաբեկում է իրենց, իրենց կողմից իբրեւ թե դավանվող եւ քարոզվող արժեքները: Բայց իրականությունն այն է, որ արեւմտյան երկրների եւ կառույցների համար մարդու իրավունքները, ժողովրդավարությունը կամ խոսքի ազատությունն իրականում ոչ մի արժեք էլ չեն, դրանք նրանց համար գործիք են՝ ոչ ընդունելի իշխանություններին ճնշելու եւ հեռացնելու համար. երբ որեւէ երկրում հաստատում են իրենց իշխանությունը, իշխանության են բերում իրենց դրածոներին, այդ արժեքները դառնում են երկրորդական, նույնիսկ՝ ավելորդ եւ խանգարող: Նիկոլ Փաշինյանը եւ նրա վարչախումբը միանգամայն ձեռնտու են արեւմտյան տերերին, հնազանդորեն կատարում են նրանց բոլոր հրահանգներն ու հանձնարարությունները, եւ, հետեւաբար, նրանք երբեք չեն հրաժարվի նրանից եւ երբեք չեն մասնակցի նրա պաշտոնազրկմանը:

Մտածել, թե արեւմտյան երկրների կամ կառույցների համար իրենց մասին հայ հասարակության ունեցած կարծիքը որեւէ արժեք ունի, ուղղակի թյուրիմացություն է, նրանց համար կարեւոր է, որ իրենց նշանակած իշխանությունը գործի իրենց հրահանգներով եւ ըստ իրենց կողմից տրված ծրագրի: Նրանք Փաշինյանի դեմ կըմբոստանան միայն մի դեպքում, եթե նա դուրս գա իրենց վերահսկողությունից, ինչը երբեք էլ տեղի չի ունենա: Այնպես որ՝ համոզելով, արեւմտյան երկրների եւ կառույցների աջակցությունը ստանալու միջոցով իշխանություն վերցնելու տարբերակը բացառվում է, եթե հնարավոր է իշխանությանը հաղթել, ապա միայն համաժողովրդական պայքարով, թեկուզ անհավասար ուժային հարաբերակցության պայմաններում, այլ տարբերակ չկա:

Սա հավասարապես վերաբերում է նաեւ այն ուժերին եւ անձանց, ովքեր փորձում են իշխանությունը վերցնել Ռուսաստանի աջակցությամբ, Փաշինյանի թույլ եւ հնազանդ իշխանությունը միանգամայն բավարարում է նաեւ Կրեմլին:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԿՃՈՅԱՆԻ ՀԱՆԴԵՊ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՔԱՆԻ ԱՄՍՈՒՄ ՓՈԽԱԿԵՐՊՎԵՑ ՍԻՐՈ

Դեծանիվ հայտնագործած չենք լինի, եթե ասենք, որ ԶՊ-ական իշխանությունն իր ղեկավարի, կառավարության անդամների, պատգամավորների, շարքային կուսակցականների ու աջակիցների առումով այն միակ ուժն է, որն ունի զրո գաղափարախոսություն: Եվ դա արտահայտվում է ամեն ինչում, անգամ եկեղեցու հանդեպ արշավի մեջ: Օրեր առաջ պարզվեց, որ մի քանի եպիսկոպոս դավաճանել են Հայ առաքելական եկեղեցուն եւ անցել Փաշազադեի հետ համագործակցված աշխատող Փաշինյանի կողմը: Հասարակությանն ամենաշատը զարմացրեց Արցախի թեմի առաջնորդի եւ Նավասարդ Կճոյանի մասնակցությունը դավադրությանը: Նույն անձը, որին Փաշինյանը Բենթլի Կճոյան էր անվանում եւ ընդամենը մի քանի ամիս առաջ խոսում «Բենթլի» ունեցող հոգեւորականների մասին, կիրակի օրը տեղի ունեցած պատարագին ջերմորեն ողջագուրվեց նրա հետ՝ բացահայտելով այս արշավի ողջ էությունը:

Ի դեպ, Սուրբ Սարգիս եկեղեցում էր նաեւ Փաշինյանի բոլոր արտագնա պատարագներին մասնակցող՝ Կոջոյան կրթահամալիրի տնօրեն Ռուզաննա Երեմյանը, որն այս տարվա մայիսի 31-ին Կճոյանի մասին գրառում էր արել. «Չեմ զարմանում: 2008 թ. արյունալի դեպքերից հետո մի առավոտ մտա Սուրբ Սարգիս եկեղեցի՝ առավոտյան ժամերգության, եւ արցունքն աչքերիս դուրս եկա: Կճոյան կոչեցյալը բեմից նզովում էր այսօրվա վարչապետին եւ այն քաղաքացիներին, ովքեր հանդգնել էին ընդդիմանալ քոչասերժական բանդային: Ես այդ ժողովրդի մի մասնիկն էի: Նզովված եւ Աստծո տանն ինձ օտար զգալով՝ հեռացա: Ասեմ ավելին՝ երկար ժամանակ է՝ եկեղեցուց մոմ չեմ գնում, որ այդ մաֆիան իմ հաշվին չապրի: Ավելի լավ է դրսի մոմավաճառներին օգնեմ: Սա է իմ դիրքորոշումը: Բոլոր սքեմավոր սատանաները պետք է դուրս քշվեն Աստծո տնից եւ մեզ չհեռացնեն մեր հազարամյա պատմություն ունեցող Սուրբ Եկեղեցուց: Գարեգին Բ-ն երբեք չի եղել իմ վեհափառը: ԿԳԲ-ի գործակալին վեհափառ անվանելը մեղք է»: Պարզվեց, արդեն մտնում է Սուրբ Սարգիս եկեղեցի, Կճոյանին էլ ներել է ու սիրում է:

Հիշեցնենք, որ ընդամենը 2 տարի առաջ՝ 2023-ին, ՀԱԵ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ (Սամվել) Կճոյանին նոր մեղադրանք էր ներկայացվել: Նա տարիներ առաջ հայտնվել էր փողերի լվացման սկանդալի կենտրոնում. օֆշորային ընկերության հիմնադիրներից մեկն էր, նրան մեղադրանք էր առաջադրվել գործարար Փայլակ Հայրապետյանին ունեզրկելու հետ կապված գործով, որտեղ գլխավոր մեղադրյալը գործարար Աշոտ Սուքիասյանն էր՝ նրա սանիկը, մյուս մասնակիցը՝ նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը: Ըստ մեղադրանքի, Սուքիասյանը բանկից ստացել էր 3 մլրդ 664 մլն 175 հազար դրամին համարժեք 9 մլն ԱՄՆ դոլար եւ 361 մլն 500 հազար դրամի վարկ, որի երաշխավորի դերը ստանձնել էր Փայլակ Հայրապետյանը: Սուքիասյանն Աֆրիկայում ադամանդի արդյունահանմամբ պետք է զբաղվեր, սակայն սնանկացել էր, եւ արդյունքում Փայլակ Հայրապետյանը կորցրեց իր գույքի մեծ մասը:



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԵԿԵՂԵՑԻ

ՄԻԱՅՆ ՓԱՇԻՆՅԱՆԸ ՉԷՐ ԿԱՐՈՂ 9 ՄԻԼԻՈՆԱՆՈՑ ԺՈՂՈՎՐԴԻՆ ԽԱՅՏԱՌԱԿԵԼ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋ



Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Դրապարակի» զրուցակիցը քաղաքագետ **Երվանդ Բոզոյանն** է:

- Կիրակի օրը տեղի ունեցած պատարագը, մի քանի եպիսկոպոսների հայտարարությունը, եւ թե ինչպես արատավոր բարքերով հայտնի մի հոգեւորական՝ Կճոյան կոչեցյալ, խոնարհումով դիմավորեց եկեղեցու եւ եկեղեցու առաջնորդի հասցեին ամենաեղկելի գնահատականները հնչեցրած Նիկոլ Փաշինյանին, շատերի մոտ տարակուսանք ու բարկություն են առաջացրել: Անգամ ռեժիսոր Հովհաննես Իշխանյանին եւ հանրային գործիչ Հայկ Դորունդին ոստիկանները եկեղեցուց բերման ենթարկեցին՝ Վեհափառի անունը վանկարկելու համար: Ձեր տպավորությամբ՝ ի՞նչ պրոցեսներ են սրանք եւ ի՞նչ հետեւանքներ կարող են թողնել:

- Այս պրոցեսները սկսվեցին մայիս ամսից, երբ Բաքվում Փաշազադեն մեղադրեց Հայ առաքելական եկեղեցուն՝ պնդելով, որ հայկական եկեղեցին ունի ռեւանշիստական նկրտումներ, ինչն իբրեւ ցույց է տալիս, որ Հայաստանը պատրաստ չէ խաղաղության պայմանագիր կնքելուն: Փաշազադեի այս հայտարարությունը Փաշինյանի համար մեսիջ էր, որ եթե նա ուզում է Ադրբեջանի հետ խաղաղություն հաստատել, ապա պետք է անհապաղ լուծի եկեղեցու խնդիրները: Ավելին՝ Ադրբեջանի հոգեւոր առաջնորդը, մեղադրելով հայկական եկեղեցուն, պատմական էքսկուրս կատարեց եւ պնդեց, որ Հայ առաքելական եկեղեցին պատմականորեն է ռեւանշիստական նկրտումներ ունեցել հարեւանների նկատմամբ:

- Բայց ինչո՞ւ է եկեղեցու հարցը Բաքվի համար այդքան կարեւոր:

- Նիկոլ Փաշինյանն աղաչում է Ալիեւից եւ Էրդողանից, որ մինչեւ ընտրությունները կնքվի այդ խաղաղության պայմանագիր կոչվածը, որպեսզի ընտրություններին ընդառաջ Փաշինյանը, այդ թղթի կտորը ձեռքին, ճանապարհ ընկնի Հայաստանի գյուղերով ու քաղաքներով եւ հասարակությանը համոզի, որ խաղաղության միակ երաշխավորն ինքն է, եւ եթե ինքը չվերարտադրվի, ապա պատերազմ տեղի կունենա, եւ հայ ժողովուրդը կրկին կհայտնվի խիստ ծանր իրավիճակում: Ալիեւը եւ Էրդողանը, հասկանալով, որ Փաշինյանը լրջագույն խնդիրներ ունի լեգիտիմության հետ, մաքսիմալ փորձում են Փաշինյանից օգուտներ քաղել եւ պահանջում են, որ նա նորանոր զիջումների գնա. Սահմանադրության փոփոխություն, Մինսկ խմբի լուծարում, Հայ առաքելական եկեղեցու կազմաքանդում, Զանգեզուրի միջանցքի հարց, ադրբեջանցիների վերաբնակեցման խնդիր եւ այլն: Այս բոլոր պահանջների շուրջ Նիկոլ Փաշինյանն արդեն իսկ համաձայնության է եկել Բաքվի հետ, միայն թե այդ խաղաղության մասին թղթի կտորը ստանա: Նա հույս ունի, որ նախքան ընտրությունները Ադրբեջանն այդ թուղթը կտրամադրի իրեն, եւ ինքը կկարողանա իր իշխանությունը վերարտադրել, հակառակ դեպքում նա սպառնում է թուրք-ադրբեջանական կողմին, որ իր շանսերը քիչ են, եւ չի կարողանալու բավարար քանակով ձայներ հավաքել, որովհետեւ հասարակությունն այլեւս մերժում է իրեն: Նա Զանգեզուրի միջանցքի հարցն էլ արդեն ինչ-որ իմաստով լուծել է: Խոստացել է, որ Սահմանադրությունը փոխելու է: Սեպտեմբերի 1-ին լուծարեցին Մինսկի խումբը եւ վերջնականապես փակեցին Ղարաբաղի խնդիրը՝ միջազգային հարթակներից: Այլեւս չկա Ղարաբաղի խնդիր: Անգամ ղարաբաղցիների վերադարձի մասին նա չի ցանկանում խոսել, այն դեպքում, երբ Ադրբեջանի իշխանությունը պետական մակարդակով խոսում է այն մասին, որ ադրբեջանցիները պետք է Հայաստան վերադառնան, որ Հայաստան պետություն գոյություն չունի, այն իրենց պատմական հայրենիքն է, եւ այսպես շարունակ: Բայց անգամ եթե Փաշինյանին հաջողվի կազմաքանդել եկեղեցին, դա էլ երաշխիք չի տալիս իրեն, որ Ալիեւը նոր պահանջներ չի ներկայացնի: Ամեն դեպքում, հիմա այդ խնդիրն են փորձում լուծել, ամեն գնով՝ պետական ռեսուրսներով եկեղեցու հարցն են լուծում, եւ այս հակամարտությունը պետք է դիտարկել հենց այս համատեքստում: Հասկանալի է, որ պետությունն ունի մեծ լծակներ եւ փորձում է ամեն գնով կազմաքանդել Հայ առաքելական եկեղեցին, որպեսզի Վեհափառը հրաժարվի իր առաքելությունից, սակայն ասեմ մի բան՝ նա ոչ միայն ցանկանում է Վեհափառին փոխել, այլեւ՝ եկեղեցու կառուցվածքը: Մենք գիտենք, որ առաքելական եկեղեցին ունի աշխարհասփյուռ կառուցվածք: Եկեղեցին ունի թեմեր Հայաստանից դուրս: Էրդողանը, Ալիեւի հետ միասին, խիստ մտահոգված է այս հանգամանքով, քանի որ հայկական սփյուռքն ունի հակաթուրքական տրամադրվածություն, ինչու, որովհետեւ սերվել է ցեղասպանության արդյունքում: Որպեսզի եկեղեցում չլինեն ռեւանշիստական տրամադրություններ, եկեղեցին չպետք է կապեր ունենա Հայաստանից դուրս: Փաշինյանն ամեն գնով փոխելու է եկեղեցու կառուցվածքը: Նա դեռ չի խոսում այդ մասին, բայց եթե նրան հաջողվեց Վեհափառին հեռացնել, ոչնչի առջեւ չի կանգնելու: Նիկոլ Փաշինյանն իր անձնական շահերը, իր անձնական փրկության հանգամանքը տեսնում է պետությունը կազմաքանդելու գնով: Նա ամեն ինչի պատրաստ է, միայն թե սեփական ժողովրդին խաբելով վերարտադրվի: Սա մեծ ողբերգություն է հայ ժողովրդի համար: Տեսնելով, թե այժմ ինչ է կատարվում, ես հասկանում եմ, թե ինչու տեղի ունեցավ 1915-ի ցեղասպանությունը: Մեր ժողովուրդը չունի բավարար անվտանգության բնազդ, հարյուր տարի առաջ էլ Օսմանյան կայսրության իշխանությունները, օգտագործելով որոշ հայ պաշտոնյաների՝ գյուղապետերի, գործիչների, բթացրին մարդկանց զգոնությունը, եւ տեղի ունեցավ այն, ինչ տեղի ունեցավ: Այն ժողովուրդները, որ չեն վախենում պատմության հետ առերեսվելուց եւ դասեր են քաղում դրանից, ունենում են շատ ավելի լավ ապագա: Եթե մարդը ճանաչում է իր անցյալի սխալները, դրանք չի կրկնում ապագայում: Մենք, ցավոք, լինելով փոքր ժողովուրդ, առաջնորդվում ենք գավառական արժեքներով: Մենք լռում ենք մեր սխալների մասին, չենք վերլուծում դրանք, չենք ճանաչում մեր բացերը: Միայն Փաշինյանը չէր կարող 9 միլիոնանոց ժողովրդին խայտառակ անել աշխարհի առաջ:

- Իսկ հայտնի հոգեւորականները՝ եպիսկոպոսները, Արցախի թեմի առաջնորդը, ինչո՞ւ են միացել Փաշինյանին: Նրանք ե՞ւս տգետ են ու գավառամիտ:

- Եկեղեցին մեր հասարակության հայելին է: Ինչպիսին որ մեր հասարակությունն է, այնպիսին էլ եկեղեցին է: Չկա նման բան, որ ժողովուրդը լինի այս աստիճան բարոյալքված, իսկ եկեղեցին լինի պայծառ եւ առողջ: Չի կարող նման բան լինել: Եկեղեցին արտացոլում է մեր հասարակության մեջ առկա իրավիճակը: Քանի դեռ այս մարդն իշխանություն է, մենք չենք կարող առողջացման պրոցես սկսել, սակայն նրա հեռանալուց հետո պետք է համոզենք մեր հասարակությանը, որ իրավիճակը փոխելու այլընտրանք կա: 21-րդ դարում ենք ապրում, ինֆորմացիայի դարաշրջան է, ողբերգություն է, երբ ժողովրդի մեծ մասը չի ընկալում պարզ իրողություններ:

ԻՍՐԱՅԵԼՆ ԱՅԼ ՃԱՆԱՊԱՐՀ ՉՈՒՆԻ, ՔԱՆ ԽՈՒՍԱՓԵԼ ԱՅՍ ՆՈՐ, ՀԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԻՑ

Արա ԱԼՈՅԱՆ

«Դրապարակի» զրուցակիցը **Միխայիլ Միլշտեյնն** է (Մերձավոր Արեւելքի եւ Աֆրիկայի ուսումնասիրությունների Մոշե Դայան կենտրոնի Պաղեստինի ուսումնասիրությունների ֆորումի ղեկավար, Իսրայել):

- Մի քանի օր առաջ Ստամբուլի գլխավոր դատախազությունը ձերբակալման որոշումներ է կայացրել Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուի եւ մի շարք այլ բարձրաստիճան իսրայելցի պաշտոնյաների, այդ թվում՝ պաշտպանության նախարար Իսրայել Կացի նկատմամբ: Իսրայելի իշխանությունները «մեղադրվում են ցեղասպանության, Գազայի հատվածի զանգվածային ռմբակոծության եւ մարդասիրական օգնության մատակարարմանը խոչընդոտելու մեջ»:

- Չեմ կարծում, թե սրան պետք է լուրջ վերաբերվել. Իսրայելն ու Թուրքիան իրականում, գետնի վրա, դաշնակիցներ են. սա համաշխարհային քաղաքականության մաս է:

- 2024 թվականի նոյեմբերին Միջազգային քրեական դատարանը (ICC) նույնպես ձերբակալման որոշումներ էր կայացրել Նեթանյահուի եւ այն ժամանակվա պաշտպանության նախարար Յոավ Գալանտի համար: Ինչպե՞ս է արձագանքել հրեական կառավարությունը նման որոշումներին, որքանո՞վ են դրանք արդիական, հաշվի առնելով, որ Գազայում հարաբերական հրադադար է, ՀԱՄԱՍ-ը շարունակում է վերադարձնել պատանդներին, այդ թվում՝ մահացածների դիերը:

- Թվում է, թե մեկ տարի առաջ տեղի ունեցած սպառնալիքն այժմ գոյություն չունի: Կառավարությունը շատ մտահոգված է դրանով, բայց ես գնահատում եմ, որ այժմ որեւէ խնդիր չկա: Թրամփի քաղաքականությունն ու գործունեությունը նույնպես նպաստում են Իսրայելի այս գնահատականին:

- Նեթանյահուն վերջերս հայտարարեց, որ կառաջադրվի վարչապետի պաշտոնում 2026 թվականի նոյեմբերի ընտրություններում եւ վստահ է իր հաղթանակում: Նա ռեկորդակիր է պաշտոնավարման ամենաերկար ժամկետով՝ ավելի քան 18 տարի, ընդհատումներով՝ 1996 թվականից ի վեր:

- Բարդ հարց է: Ես կարծում եմ, որ ընտրություններից մի քանի օր կամ շաբաթ առաջ տեղի ունեցող իրադարձությունները մեծ ազդեցություն կունենան:

- Մինչ Գազայում իրավիճակը կայունանում է, Իսրայելը շարունակում է հարվածներ հասցնել Հարավային Լիբանանին՝ թիրախավորելով «Հեզբոլլահի» ռազմավարական ենթակառուցվածքները եւ զինյալներին: Ժամեր առաջ Արեւմտյան ափի հյուսիսում լայնածավալ գործողություն սկսվեց:

- Շատ հավանական է՝ «Հեզբոլլահը» ձգտում է վերականգնվել եւ կրկին զարգացնել ռազմական սպառնալիքը, իսկ Աունի կառավարությունը փաստացի անօգնական է, ուստի Իսրայելի համար թվում է, թե ոչ մի ճանապարհ չկա, քան խուսափել այս նոր, հին սպառնալիքից:

- Հայաստանում եւ հայերի շրջանում Նեթանյահուի վարչակազմի նկատմամբ կա որոշակի բացասական վերաբերմունք՝ Իսրայելի եւ Ադրբեջանի միջեւ սերտ հարաբերությունների եւ ռազմական համագործակցության պատճառով: Ի դեպ, կա նաեւ տարակուսանք այն առումով, որ Անկարան Բաքվի գլխավոր ռազմավարական դաշնակիցն է, կա «եղբայրական անսասան դաշինք»: Մի՞թե Ադրբեջանը չի կիսում կամ գոնե չի համարձակվում դեմ լինել Թուրքիայի կողմից Նեթանյահուի եւ նրա կառավարության վերաբերյալ գնահատականին:

- Ցավոք, ես իրականում ոչինչ չգիտեմ այս հարցի վերաբերյալ:

ԷԿՈԼՈԳԻԱ

ԵՐԵՎԱՆԻ ՕԴԸ ՍՊԱՆՈՒՄ Է

Երեւանում ապրողներին խեղդող աղտոտված օդը դարձել է ազգային սպառնալիք: Վարչախումբն ասում է, թե մարդկանց սպանում է ոչ թե թունավոր օդը, այլ՝ եղանակը, ինչ-որ «անտիցիկլոն»: Իմ համոզմամբ՝ աղետի իրական պատճառը վարչախմբի պաթոլոգիկ ստախոսությունն է եւ մեր լռությունը: Մարդկանց շնչահեղձ անող բնապահպանական ճգնաժամի արմատը ՔՊ-ի վարչախմբին հանդուրժելու քաղաքական ռիսկն է: Այն արտաշնչած օդի հետ դուրս է գալիս մեր եւ մեր երեխաների քթից:

Աղետի գլխավոր պատճառներից մեկը առանց կատալիզատոր ավտոմեքենաներն են: Կատալիզատորը մեքենայի «թոքերն» է. այն այրման արդյունքում առաջացած թունավոր գազերը՝ ազոտի օքսիդները, ածխաջրածինները, ածխաթթու գազը, վերափոխում է ավելի անվնաս միացությունների: Վարորդները կատալիզատորները հանում են այն պատճառով, որ դրանք խցանվում են, եւ վերականգնումը թանկ արժե: Իսկ սեւ շուկայում կատալիզատորի պահանջարկն անփոփոխ բարձր է՝ մեջը եղած գունավոր մետաղների պատճառով: Մեկանգամյա շահույթի հետեւից ընկնելով՝ մարդիկ դանդաղ մահվան են դատապարտում ուրիշներին եւ իրենց, քանի որ առանց կատալիզատոր մեքենաները մթնոլորտ են նետում անհամեմատ շատ թունավոր գազերով հագեցած այնպիսի խառնուրդ, որի համար մարդու կյանքը բարձրագույն արժեք համարող երկրներում ոչ թե քարոզ են կարդում, այլ խոշոր տուգանքներ գանձում եւ առգրավում նման մեքենաները: Առանց կատալիզատորի շահագործվող անգամ սահմանափակ քանակի ավտոմեքենաները տարվա ընթացքում օդ են արտանետում նաեւ մարդու կյանքի համար խիստ վտանգավոր PM2.5 եւ ծանր մետաղներ: Դրա հետեւանքն է Հայաստանում օնկոլոգիական հիվանդությունների աճը: Երկարաբանելու եւ նոր հիմնավորումներ բերելու կարիք չկա՝ պետք է քոքից կտրել այս չարիքը:

Մյուսը: Մեզ հանդիպած ուսումնասիրություններից մեկում նշվում է, որ մեքենաների ոչ արտանետումային (non exhaust) աղտոտվածությանը (անվադողերի եւ արգելակների մաշվածությանն ու ճանապարհափոշուն) բաժին է ընկնում կոշտ մասնիկներով (particulate matter - PM) օդի աղտոտվածության եւ այդ պատճառով մահացությունների զգալի մասը: Հայտնի է, որ տրանսպորտային արտանետումային (tailpipe exhaust) եւ ոչ արտանետումային աղտոտումները հարուցում են շնչառական եւ սրտանոթային հիվանդություններ: Գիտնականների կարծիքով՝ թեեւ չկա մեքենաների արտանետումների ազդեցությունից մահերի ընդհանուր վիճակագրություն, որովհետեւ գոյություն ունեն բացասական ազդեցության բազմաթիվ աղբյուրներ եւ բնակության տարբեր պայմաններ, այդուհանդերձ, առկա են օդի աղտոտվածության մեջ տրանսպորտի բաժինը մոդելավորող եւ բնապահպանական տեսանկյունից արժանահավատ գնահատականներ: Ըստ այդմ, գիտականորեն հաստատված է, որ առանց կատալիզատոր (թեկուզեւ հիանալի պահպանված) մեքենաների բաժինը քաղաքների աղտոտման ծավալում որոշիչ է եւ տարիների ընթացքում դառնում է շնչառական եւ սրտանոթային հիվանդություններից վաղաժամ մահերի գլխավոր պատճառը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ անսարք եւ տեխնիկական վերահսկողությունից դուրս գտնվող հարմարավետ փոխադրամիջոցը դարձել է շարժվող մահ: Ուստի պատահական չէ, թե որքան լուրջ վերաբերմունք կա զարգացած պետություններում ավտոմեքենաների տեխզննության, արդիականացման, ավելի մաքուր հասարակական տրանսպորտ ներդնելու, քաղաքային երթեւեկության ու տարածքների խելացի պլանավորման հարցերում:

Ես մեկ դիտարկում: Երեւանում եւ շրջակայքում գործող բաց ավազահանքերը տարիներ շարունակ դարձել են բնապահպանական, աղետի գլխավոր պատճառներից մեկը: Երբ հյուսիսային սաստիկ քամին ավազափոշին հասցնում է մայրաքաղաք, մթնոլորտային օդի որակը մի քանի ժամվա ընթացքում կտրուկ վատթարանում է: Հանքերը գործում են «սեւ խոռոչի» կանոններով, որպես մի արտապետական տարածք, որտեղ բնապահպանական նորմերն անտեսվում են ու համարվում բացարձակապես ավելորդ մի բան: Ավազահանքերի անխնա ու հակաօրինական շահագործումը Երեւանի վրա ծանրացած փոշու բարձր չափաբաժին են ապահովում, եւ դրան ենք պարտական, որ Երեւանն ասոցացվում է ոչ թե եվրոպական, այլ արեւելյան աղտոտված քաղաքների հետ: Նույնիսկ եթե վաղը քամի փչի, այն չի քշի-տանի մեր բնապահպանական խնդիրները, որովհետեւ եւ տրանսպորտի ու շինարարության բնագավառներում տեխնիկական հսկողության բացակայությունը, եւ հանքերի լեգալացված անպատժելիությունը դարձել են վարչախմբի անգործության խորհրդանիշը:

30 տարի առաջ Սամվել Շահինյանի (ԳԽ բնության պահպանության եւ բնական պաշարների մշտական հանձնաժողովի նախագահ) հետ այցելեցինք ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն, որի հիմնադիր նախագահ Արմեն Սաղաթելյանը մեզ ներկայացրեց իրենց ստեղծած՝ Երեւանի բնապահպանական վիճակի ամբողջական քարտեզը: Հիմա տեղյակ չեմ՝ թարմացվո՞ւմ է, արդյոք, այդ քարտեզը, սակայն մի բան անվիճելի է՝ առանց տվյալների ոչ մի քաղաքականություն գոյություն չունի: Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանին կարեւոր լուր ունեմ հայտնելու՝ երեւանցիները ոչ թե կլիմայի փոփոխության կարիք ունեն, այլ քաղաքական կամքի: Գործե՛ք: Հետեւեք աղտոտվածության միջազգային սանդղակին, Երեւանում հայտարարեք «կարմիր օրեր» եւ իրականացրեք անհապաղ միջոցառումներ, օրինակ՝ կրճատեք մեքենաների հոսքը, դադարեցրեք առավել փոշեծին շինարարությունները, իրականացրեք փողոցների ինտենսիվ լվացում եւ այլն: Երեւանն արդեն բնապահպանական արտակարգ իրավիճակում է, կարգադրեք, որպեսզի մայրաքաղաքում անաչառ տեխզննության ենթարկվեն բոլոր ավտոմեքենաները, եւ արգելվի առանց կատալիզատոր մեքենաների շահագործումը (ա), կասեցվի քաղաքում եւ 50 կմ շառավղով արվարձանում գործող ավազահանքերի, քարհանքերի շահագործումը (բ), դադարեցվի կանաչ տարածքների

եւ խաղահրապարակների տեղում շենքերի շինարարությունը, հատկապես՝ Կենտրոնում (գ), շարունակվի հասարակական տրանսպորտի նորացումը, ձեռք բերվեն փողոցները խոզանակներով կամ փոշեծծիչով մաքրող-լվացող մեքենաներ (դ), Նուբարաշենի աղբավայրը ճանաչվի պետության կողմից հատուկ վերահսկվող տարածք, հիմնվի աղբի վերամշակման արդի ձեռնարկության (ե), ձեւավորվի բնապահպանական հարցերով քաղաքացիական վերահսկողության խորհուրդ, ստեղծվեն մոնիթորինգի կայաններ, ակադեմիական եւ անկախ լաբորատորիաներ, հրապարակվեն իրավիճակի պարբերական հաշվետվություններ (զ):

Կրկնում եմ՝ գործե՛ք: Եվ հիշեք՝ սառույցը կոտրվում է վտանգավոր տեղում ու անժամանակ:

Արա ՍԱՀԱԿՅԱՆ

ԵՐԿՈՒ ՖԻԼՄ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՆՈՅԻ ԴԱՍԱԿԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հայկական կինոյի դասական Արտաշես Հայ-Արթյանը ծնվել է 1899 թվականին՝ ռուսական կայսրության Կարսի մարզի Նախիջեւան գյուղում: Իրական անունն է՝ Արտաշես Թադեւոսի Հարությունյան: Հայ-Արթյանը ստեղծագործական կեղծանուն է: Նախքան կինոարվեստ գալը, նա 1914-19 թթ. մի քանի աշխատանք է փոխել: Եղել է գրագիր, դարբին, առաքիչ: 1921 թվականին ավարտել է Երեւանի Հայկական դրամատիկական ստուդիան: Հետո ուսանել է Մոսկվայի Հայկական թատերական ստուդիայում: 1923-ին Հայ-Արթյանը դիմել է Կինեմատոգրաֆիայի պետական տեխնիկումի դերասանական բաժին: Այն ավարտել 1927 թվականին: 1925-35 թթ. ապրել է Մոսկվայում, աշխատել որպես ռեժիսորի օգնական՝ Պետկինոյի ու Սոյուզկինոյի թիվ մեկ ֆաբրիկայում: Կինոնկարներում սկսել է նկարահանվել 1923 թվականից: 1931-ին ավարտել է ՎԳԻԿ-ին կից երկամյա ռեժիսորական բարձրագույն դասընթացը, որը ղեկավարել են Աբրահամ Ռոոմն ու Սերգեյ Էյզենշտեյնը: Մինչեւ 1935 թվականին «Հայկինո» գնալը՝ նկարահանվել է մոսկովյան ստուդիաներում՝ «Պյոտր Իվանովիչ» (1931), «Ես փոքրիկ չեմ» (1932), «Փոքր հովիվը» (1935) ֆիլմերում:

1935թ. աշխատանքի է հրավիրվել «Հայֆիլմ» կինոստուդիա: 1937-ին թողարկել է իր առաջին լիամետրաժ գեղարվեստական ֆիլմը՝ «Կարո»-ն, որի սցենարի համահեղինակն էր: Երեք տարի հետո՝ 1940-ին, էկրան է բարձրանում Հայ-Արթյանի երկրորդ գեղարվեստական աշխատանքը՝ «Մեր կոլխոզի մարդիկ» խորագրով: Այս ֆիլմից հետո նկարահանում է «Պատվի համար»-ը:

1946-54 թթ. զբաղվել է կինոնկարների հայերեն կրկնօրինակմամբ: Արտաշես Հայ-Արթյանը կյանքից հեռացել է 1978 թվականին, Երեւանում: Ներկայացնում ենք երկու կինոնկար՝ նրա մասնակցությամբ:

«Դավաճանը», 1926 թվական, ռեժիսոր՝ Աբրահամ Ռոոմ: Համր ֆիլմ է: Նկարահանվել է Լեւ Նիկուլինի «Նավաստիական անդորր» պատմվածքի հիման վրա: Ֆիլմն ամբողջովին չի պահպանվել: Տեւական ժամանակ համարվել է կորսված: Այժմ հասանելի են ֆիլմի միայն առաջին քսան րոպեները: Գործողությունները տեղի են ունենում Պրիմորիեի ավաններից մեկում, նախահեղափոխական շրջանում: Պատմում է ցարական ոստիկանության դեմ բոլշեւիկների մղած ընդհատակյա պայքարի մասին: Աբրահամ Ռոոմն այս կինոնկարի մասին գրել է, որ ժապավենը դիտվող դարձնելու համար հետաքրքիր հնարք է կիրառել՝ ապահովելով երեք կինեմատոգրաֆիական պահեր՝ անսպասելիություն, անորոշություն եւ հանկարծակիություն: Դրանց շնորհիվ հանդիսատեսը ֆիլմի ողջ ընթացքում լարված հետեւում է զարգացումներին:

«Մահվան ծովախորշը», 1926 թ. ռեժիսոր՝ Աբրահամ Ռոոմ: Նկարահանվել է Ալեքսեյ Նովիկով-Պրիբոյի «Օտրադոյի ծովախորշում» պատմվածքի հիման վրա: Գործողությունները տեղի են ունենում քաղաքացիական պատերազմի ժամանակ: Հարավային նավահանգիստներից մեկում, որը գրավված

է սպիտակգվարդիականների կողմից, «Լեբեդ» նավի վրա ապստամբություն է նախապատրաստվում բոլշեւիկների ու պարտիզանների կողմից: Հեղափոխականների մեջ է նաեւ նավի մեխանիկի որդին: Մեխանիկը չի ցանկանում քաղաքականությանը խառնվել: Սակայն դառնալով ականատես, թե ինչպես են հաշվեհարդար տեսնում հեղափոխականների նկատմամբ, բացում է «Լեբեդի» քինգսթոնները ու նավը ջրասույզ անում:

Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՄԻ ՊԱՌԱԿՏՄԱՆ ՄԱՍԻՆ. ԴԱՍԵՐ ՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐ

Ուկրաինայում երբ եկեղեցական պառակտումը սկսվեց, ու հատկապես ծավալվեցին ներկայիս հալածանքները կանոնական Ուկրաինական ուղղափառ եկեղեցու նկատմամբ, որը «ի հոգեորս» ենթակա է Ռուս ուղղափառ եկեղեցուն՝ ի դեմս Մոսկվայի պատրիարքության, շատերը սկսեցին մեղավորներ փնտրել ստեղծված վիճակի համար ու հայտարարեցին, թե մեղավորը իքսն է, իգրեկն է՝ ուկրաինական քաղաքական ղեկավարությունից մինչեւ աշխարհաքաղաքական գործոն եւ այլն:

Իրականում, սակայն, քչերը փորձեցին խորանալ ուկրաինական եկեղեցական պառակտման պատմության մեջ ու հասնել մինչեւ արմատներ՝ պարզելու ու հասկանալու, որ, օրինակ, ինքնահռչակ պատրիարք Ֆիլարետ Դենիսենկոն Ռուս ուղղափառ եկեղեցու ամենից հայտնի ու ազդեցիկ գործիչներից է եղել, որին գրեթե երաշխավորել է ժամանակի խորհրդային իշխանությունը, որ Ռուս ուղղափառ եկեղեցու այն ժամանակվա պատրիարք Պիմենի մահվանից հետո ինքն է դառնալու պատրիարք: Սակայն Պիմենը մեռավ 1990 թվականին՝ ԽՍՀՄ վերջալույսին, եւ Ռուս ուղղափառ եկեղեցու ժողովը պատրիարք ընտրեց ոչ թե իշխանությունների համար ընդունելի Ֆիլարետին, այլ՝ միտրոպոլիտ Ալեքսի Ռիդիգերին, որը դարձավ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Ալեքսի 2-րդ պատրիարք: Ֆիլարետը մնաց ձեռնունայն ու, լինելով գոռոզ մարդ, սկսեց սառեցնել իր ղեկավարած եկեղեցական կառույցի ու Մոսկվայի պատրիարքության միջեւ հարաբերությունները: Մինչեւ 2008-ը՝ Ալեքսի 2-րդի մահը, նա չի համարձակվել կտրուկ քայլերի գնալ: Հայտնի է, որ Ալեքսի 2-րդը նույնիսկ այցեր է կատարել Ուկրաինա՝ Կիեւ, եւ նրան ընդունել են որպես եկեղեցական գերագահ նվիրապետի: Սակայն Ալեքսի 2-րդի մահվանից ու գործող պատրիարք Կիրիլ 1-ինի ընտրությունից հետո հարաբերություններն ավելի սրվեցին: Հատկապես, որ Ուկրաինայի իշխանությունն էլ դա քաջալերում էր՝ սեփական քաղաքական օրակարգն առաջ մղելու եւ ուկրաինական պետության աշխարհաքաղաքական ընտրությունը փոխելու համար:

Ռուսաստանում էլ քաղաքական լանդշաֆտը սկսեց փոխվել, ու ներկայիս ընդգծված անտիարեւմտյան քաղաքականության արմատները պետք է այն ժամանակներում փնտրել, երբ Պուտինն աստիճանաբար սկսեց հատհատ լուծել «տարերային 90-ականների» հիմնական գործող «ֆիգուրների» հարցերը եւ գերկենտրոնացնել իշխանությունն ու ռեսուրսներն իր ձեռքում: Ու քաղաքական լանդշաֆտի փոփոխությանը զուգահեռ, փոխվեց նաեւ Մոսկվայի պատրիարքության մոտեցումը՝ դառնալով ավելի կտրուկ, ի տարբերություն Ալեքսի 2-րդի որդեգրած լայնախոհության: Արդյունքում՝արդեն այսօր Ուկրաինայում կա մի քանի ուղղափառ ավանդույթի եկեղեցի, որը նշանակում է եկեղեցու պառակտում, մի բան, որը շատ լուրջ վերք է որեւէ էթնիկ խմբի կամ հասարակության համար եւ ապաքինվում է շատ երկար ժամանակում, եթե, իհարկե, ապաքինվում էլ է:

Պարզ է մի բան՝ եկեղեցական վերնախավում սովորաբար լինում են ճամբարներ, երբ բարձրաստիճան եկեղեցականները միավորվում են ինչ-ինչ շահերից ելնելով: Հաճախ այդ ճամբարների միջեւ լինում են հակասություններ: Դրանք սովորաբար չեն երեւում այնքան ժամանակ, քանի դեռ նպաստավոր պայմանները չեն խթանել, որ դառնան ավելի բացահայտ: Խթանել կարող են տարբեր հանգամանքներ՝ իշխանություն-եկեղեցու ղեկավարություն հարաբերություններում խնդիրների ի հայտ գալը, միջպետական հարաբերություններում ծագող խնդիրները, երկրի ներսում գործող իշխանությունների՝ քաղաքական կամ աշխարհաքաղաքական օրակարգերը, որոնք կարող են չընդունվել երկրում դոմինանտ դեր ունեցող կրոնական համայնքի ղեկավարության կողմից կամ արժանանալ քննադատության եւ այլն: Արդյունքում, եղած խուլ հակադրությունները եկեղեցական էլիտաների ներսում աստիճանաբար սկսում են ավելի դուրս գալ մակերես ու դառնալ ակնհայտ՝ վերածվելով բացահայտ առճակատման:

Հայաստանում էլ շատ առումներով իրավիճակը նույնն է: Ակնհայտ է, որ Հայաստանի իշխանություններն իրականացնում են հայկական պետականության վերաֆորմատավորում կամ, ինչպես իրենք են ասում, չորրորդ հանրապետություն են ստեղծում: Դա այլ համակարգ է լինելու՝ աշխարհաքաղաքական ընտրությունից մինչեւ միջպետական հարաբերություններ ու ներքին կյանքի կառավարում, ներքաղաքական համակարգի կառուցակարգեր: Ու այս իրավիճակում, Հայաստանի իշխանությունները, որոնք նաեւ տիրապետում են կոմպրոմատային ինֆորմացիայի բոլոր քիչ թե շատ ազդեցիկ անհատի կամ կառույցի նկատմամբ, դա սկսում են օգտագործել իրենց օգտին: Մյուս կողմից, Հայաստանի ներկայիս իշխանությունները շատ լավ գիտեն նաեւ, որ առաքելական եկեղեցին բացառություն չէ՝ նրա վերնախավում էլ կան, այսպես ասած, ճամբարներ, որոնց մեջ հակադրություն կա ու խուլ պայքար: Հատկապես 44-օրյա պատերազմից հետո, երբ Գարեգին 2-րդը միացավ Փաշինյանի հրաժարականը պահանջող կառույցներին, ներեկեղեցական խմբավորումների առճակատումն ավելի բացահայտ ձեւ ստացավ: Դա, իհարկե, գիտեր նաեւ Հայաստանի գործող իշխանությունը ու ճիշտ պահն օգտագործելով՝ կարողացավ ճգնաժամ առաջացնել եկեղեցու ներսում՝ ընդհուպ մինչեւ եկեղեցու գործող ղեկավարի հրաժարականի պահանջի ձեւակերպում:

Ցանկացած երկրի իշխանություն ունի իր առաջնահերթությունները եւ շարժվում է դրանց հանգույն, անկախ նրանից, թե ով ինչ վերաբերմունք ունի այդ առաջնահերթությունների հանդեպ, Հայաստանի իշխանությունները բացառություն չեն: Նրանցից պահանջել ազնվություն, պետական շահն իրենց անձնականից վեր դասել՝ անիմաստ է: Հետեւաբար ունենք այն, ինչ ունենք՝ եկեղեցական ոլորտում: Արդյո՞ք այս ճգնաժամը կխորանա այնքան, որ հասնենք Ուկրաինային եւ ունենանք մի քանի առաքելական եկեղեցի, դժվար է ասել: Տա Աստված, որ ճիշտ ժամանակին բոլոր ներգրավված կողմերը կարողանան կանգ առնել: Հատկապես, որ մենք ուկրաինացի ժողովրդի նման մի քանի տասնյակ միլիոն չենք, ու մեզ համար եկեղեցական հողի վրա պառակտումը չափազանց մեծ ճոխություն է ու շատ վտանգավոր պրոցես՝ «հոգեվարքի մահվան քրտինքին» նմանվող:

Սերոբ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՋՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

Բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր **Արմինե Օհանյան**
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 2.12.2025թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՀԱՅ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Պայծառափայլ տեր, մենք մի խումբ խեղճուկրակ գործարարներ ենք Հայաստանից, սփյուռքից, այսուայնտեղից: Այսահարված ենք հայաստանյան վերջին իրադարձություններից: ԱԱԾ-ի պադվալ եք նետել Ազգային Բարերար Սամվել Կարապետյանին: Փառք Աստծո, այդ արեցիք առանց ասֆալտին փռելու: Իսկ ինչ երաշխիք, որ վաղն էլ մենք չենք հայտնվի նույն ծակուռում: Մեր՝ արյուն-քրտինքով ձեռք բերած բիզնեսները չքն խլվի ձեր արդար կամոք: Ինչ է արել Սամվել Կարապետյանը: Տղա է, էլի, միամտաբար ասել է՝ «Մենք մեր ձեւով»: Հո չի՞ ասել՝ «Մենք մեր ձեւով կդոմփենք»:

Թեեւ, ո՞վ գիտե, գուցե այդ ժամանակ նա դառնար ձեր աչքի լույսը...

Չենք հասկանում՝ ինչ բառեր օգտագործենք, որ չարժանանանք ձեր արդար զայրույթին ու վսեմակտրուկ գործողություններին: Մենք լավ գիտենք, որ նախորդ դարում՝ Թուրքիայում, հիմա՝ մեր դարում՝ Հայաստանում, արգելվել ու արգելվում է արտասանել, անգամ մտքի ծայրով անցկացնել «Արցախ», «հայրենիք», «Արարատ», «Սահմանադրություն», «արդարություն», «խոսքի իրավունք» եւ նման ախտածին այլ բառեր ու դրանցով կազմված նախադասություններ:

Վսեմաշուք տեր, մենք չենք էլ օգտագործում:

Մենք սիրով ենք օգտագործում ձեր բառապաշարի զարդարագույն արտահայտությունները, դրանք դարձրել ենք մեր կյանքի ու առօրյայի անբաժանելի մասը, դրանցով ենք կրթում մեր զավակներին: Հիշենք ասույթի ուժ ունեցող ու խնկարկման արժանի ձեր ոսկեղենիկ խոսքերից մի քանիսը՝ կոպեկ առ կոպեկ, քյաբաբ առ քյաբաբ, պատերով կտամ, ասֆալտին կփռեմ, ձեններդ կտրեք, էշ, ոջիլ, չագուջ, համբալ, մեր եկեղեցիները չուլաններ են, Գառնու տաճարը հավաբուն է, Քարահունջի աստղադիտարանը՝ ռագատկի քար, Շուշին՝ դժգույն քաղաք, զզվեցրիք ձեր պատմական Հայաստանով...

Չենք կարող բոլորը մեջբերել՝ դրանք մի ողջ բառարան կկազմեն: Բայց, այ, մենք չենք օգտագործում ժողովրդի մեջ օրեցօր ավելի ու ավելի շատ շրջանառվող բառամթերքը, որոնք ամոթով ներկայացնում ենք ձեզ. Նիկոլ՝ դավաճան, անկիրթ, անհայրենիք, հայրենադավ, տգետ, թրքահաճո, զավզակ, կամազուրկ, ճըղճըղ, նեռ, փաշօղլի, թուրքի գործակալ, անգամ՝ կոլաբորանտ, դիկտատոր, պիղծ, խտացրած կաթով տոլմա փաթաթող, երկրի գլխավոր գժապետ, գերագույն մսխող եւ այլն, եւ այլն... Հսկա հատոր: Երանի չէ՞ր՝ ժողովուրդը մի բերան ունենար՝ ցխեիր, գնար...

Ով դու, առաջնորդներից մեծագույնը, առաջնորդների առաջնորդը, խաղաղության խաչասերումի հետ միաժամանակ, արագ ստեղծիր նոր բառեր, երկնիր նոր բառամթերք, ու մենք կհետեւենք ձերդ մեծություն վարչապետին: Մենք լավ ենք հասկանում, որ ամեն իշխանություն անցողիկ է, միայն ձեր իշխանությունն է անանցողիկ: Որովհետեւ՝ թեեւ այս աշխարհն ի սկզբանե ունայն ու անիմաստ է, միայն դուք եք, որ իմաստ եք հաղորդում մեր դատարկ ու ունայն կյանքին:

Ասա, ինչ բառեր օգտագործենք, ինչ չօգտագործենք, որ արժանի լինենք ձերդ ողորմածությանը...

Եվ մի կարեւոր արձանագրում էլ անենք (դուք շատ եք սիրում արձանագրումներ անել), դուք եք երկրիս միակ իրավացին: Դե, ուրեմն՝ անվարան առաջ... Քանզի ժողովուրդը (նկատի ունենք՝ քո սիրած բառով՝ ժեխը) իր իշխանության մեջ տեսնում է թե՛ ձեր եւ թե՛ իր արտապատկերը...

Հարգանքներով իսկական՝
մի խումբ գործարարներ
այսուայնտեղից (10 000 ստորագրություն)
Նամակը գրի առավ
Գագիկ Անտոնյանը
Լրագրող, գրող, երգիծաբան

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am